653
S-66

653
Կ-24 100
01 OCT 2010

# ՀԱՅԿԱԿԱՆ ՍՂԱԳՐՈՒԹԻՒՆ

ԸՍՏ ԴՐՈՒԹԵԱՆ

Փ. Ք. ԿԱՊԵԼՍՊԷՐԿԵՐԻ

ՅԱՐՄԱՐԵԱԼ

Ի Հ. ԱԹԱՆԱՍԷ ՏԻՐՈՅԵԱՆ

ՅՈՒԽՏԷՆ ՄԽԻԹԱՐԱՅ



ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ
1888

Գ. ՊԱԼԵՆՑ
Կ. ՊՈԼԻՍ

653 ur
S-66
196

# ՀԱՅԿԱԿԱՆ

# ՍՂԱԳՐՈՒԹԻՒՆ

630
137-Տի

# ՀԱՅԿԱԿԱՆ

# ՍՂԱԳՐՈՒԹԻՒՆ

ԸՍՏ ԴՐՈՒԹԵԱՆ

Փ. Ք. ԿԱՊԵԼՍՊԷՐԿԵՐԻ

ՅԱՐՄԱՐԵԱԼ

Ի Հ. ԱԹԱՆԱՍԷ ՏԻՐՈՅԵԱՆ

ՅՈՒԽՏԷՆ ՄԽԻԹԱՐԱՅ

1003
10868

[stamp] 7/XI--1922

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1888

# ՓՈԽԱՆԱԿ

# ԿԱՆԽԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Մարդս՝ հաւատարիմ իւր 'ի բնէ ստացած սկզբանց՝ դարուց 'ի դարս կը ձգնի թեթեւցընելու աշխատութեան լծոյն ծանրութիւնը, դիւրացընելով անոր միջոցները. և այս սկզբնական բերմամբ՝ ինչպէս այժմ կենդանեաց կամ մարդկանց ուժոյն տեղ շոգւոյ բռնութիւնը փոխանակած է, և ուր հնար է՝ շոգւոյ տեղ մագնիսական և ելեկտրական զօրութեամբք կը գործէ, այնպէս նաև 'ի սկզբանէ հետէ հնարագիտութեամբ մեքենայից՝ ջանացեր է միշտ թեթեւցընել իւր անձնական կատարելիք աշխատութիւնն: Հոս մեք 'ի նկատի կ'ուզեմք առնուլ միայն՝ վեր 'ի վերոյ տեսութեամբ՝ մարդոյս այս ընդաբոյս բերման յառաջադիմութիւնն 'ի գրութեան մասին: Յիրաւի, դարաւոր կենաց հետաքննչ յիշատակներ են այն եգիպտական և ասորա-բաբելական արձանագրութիւնք, զորս ժամանակին յանդուգն երեւակայութիւնն և ձեռքերն ուղեր են բուրգերու և անխորտակելի ժայռերու վրայ դրոշմել, իբրև անմաշելի յաւերժական յիշատակ նախնեաց քաջագործութեանց առ յետագայ սերունդս մարդկութեան: Բայց ո՞րչափ անձինք արդեօք պիտի կարողանային այնպիսի ահաւոր ձեռնարկի մը դժուարութեանց յաղթելով՝ դերեզմանէն անդին եւս ապագայից հետ խօսիլ, հաղորդակցիլ և անոնց մտաց հետ ապրիլ. անշուշտ կամ մեծագործ փարաւոն մը, կամ Ասորեստանի միահեծան յաղթանակող աշխարհակալ մը, կամ Իսրայելեան բանակին առաջնորդող մշտայաղթ զօրավար մը, և կամ առասպելաւանդն Շամիրամայ նման՝ ժամանակին դիւցազնուհի մը. իսկ ա՞յլ ամենայն դերադոյն իմաստնոց մտացն և հանճարոյ ստեղծագործութիւնք, որք փոխանակ անոտի պարծանաց և արիւնուշտ յաղթանակաց՝ պիտի աւանդէին մեզ մեր նախնեաց ընտանեկան կենաց քաղցրութիւններն և դառնութիւններն և անոնց մտաւորական զարգացման արդասիքները՝ խաւար լռութեան մէջ պիտի թաղուէին: Բայց ոչ. մարդս նման առուակի մը, որ լերան մը բարձր գագաթէն վար իջնելով՝ տեղի կու տայ արգելիչ ժայռերու, և իւր ընթացքը փոխելով՝ դիւրա-

գոյն ճանապարհէ մի վար կը սահի, մարդս՝ դժուարութեան դէմ պատերազմելէն աւելի՝ ընդհանրապէս կ՚ընտրէ խոյս տալ անոր՝ երբ կարող է. փոխանակ ժայռեր և կարծր վէմեր ընտրելու իւր գաղափարաց աւանդապահ, ՚ի գործ կ՚ածէ առ այն՝ թրծուն աղիւսներ և ծառոց կեղևներ, թէպէտ և չլինին սոքա այնքան երկարակեաց՝ որչափ առաջինքն. որով դարուց յառաջադիմութեան հետ գրութեան եղանակն ևս դիւրանալով մեհենադրոշմ քանդակաց և սեպաձև բևեռագրաց տեղ՝ կը փոխանակեն աղիւսաց կամ մետաղական տախտակաց և պապիրոսաց գրուածներն. և յայտ է՝ որ մարդկութիւնն անգամ մի այս նիւթոյ փոփոխման առաջին քայլն առնելով պիտի ջանար հետզհետէ դիւրացընելու գրութեան նիւթականն, մերթ ընտրելով ոսկերս, մերթ զմագաղաթս, մերթ բամբակեայ գործուած թուղթն, մերթ մետաքսեայ կամ բրնձեայ շինուած նիւթականներ, մինչև մեր օրերուս սովորական թղթոյ դիւրութեանն և ազնուութեանն հասնելով. և այս՝ ըստ կաղմածոյ նիւթականի գրութեան:

Նոյնը պիտի նշմարենք նաև ըստ ոճոյ կամ ձևի գրութեան՝ եթէ ակնարկ մի ձգենք եգիպտական խորհրդական նշանաց՝ առ տակաւ տակաւ այլակերպութեանն ՚ի սեպաձև գրութիւնս, ՚ի փիւնիկեան, յեբրայական և ՚ի համօրէն սեմական լեզուաց նշանագիրս, որք դեռ ևս իրենց անկիւնաւոր ձևերով յիշեցընել կու տան նախկին բևեռագրաց ծնունդ լինելնին:

Ուրիշ նշանաւոր երևոյթ մ՚ալ ՚ի գրութեան մասին սեմական լեզուաց՝ կը ներկայանայ մեր առջև, այսինքն՝ ձայնաւոր նշանաց տարագրութիւնն. յորմէ և բառի մը զանազան կերպ հնչումն՝ անփոփոխ մնալով միայն բաղաձայններն: Այս երևոյթն ևս՝ որքան և տրամաբանական հետևանք մ՚է լեզուաքննութեան մէջ, սակայն ոչ սակաւ դժուարութիւն կ՚ընծայէ գրաւոր լեզուի մը տարածուելուն և ընդհանրանալուն: Ազգային լեզունիս թէպէտ և ՚ի բնէ զուրկ է սեմական լեզուաց այս յատկութենէն, և իւր քոյրաթիւ հնդեւրոպեան լեզուաց համաձայն՝ պահած է հնուց ՚ի վեր իւր ձայնաւորաց գոյութիւնն ՚ի գրութեան, սակայն ինչպէս կ՚երևի, Հագարացւոց լեզուին մեր աշխարհին մէջ մօտ գտնուելէն զկնի՝ ունեցեր է նաև լեզունիս իւր բողոջյոնական կամ ղոփուափեր գրութիւնն՝ նկատմամբ այբ տառին, և ուրեք ուրեք նաև ուրիշ քանի մի ձայնաւորաց:

Այս նշանաւոր երևութէս զատ՝ եթէ նաև վէր ՚ի վերոյ ակնարկ մի տալ ուզենք մեր լեզուին գրութեան ՚ի ձեռագիրս, պիտի տեսնենք՝ որ մեր հին տառերն ևս իրենց նախնական ձևոյն մէջ շատ հեռի պիտի չլինէին ՚ի բևեռաձև գրութենէ, որք յետոյ դարուց ՚ի դարս փոփոխուելով երկաթագիր, բոլորագիր, նոտրագիր և շեղագիր գրութեանց ձևերով կը ծառայեն մեզ ցայսօր ժամանակի. և կրնանք իսկ առանց երկբայելու յաւելուլ՝ որ թերևս մեր երկաթագիրն այնքան հեռի չլինի ՚ի բևեռաձևից՝ որքան այժմեան շեղագիրն ՚ի նախկին երկաթագրոյն:

Մինչև ցաստ ըսածնէս կ՚ուզենք հետևցընել՝ որ դարուց ՚ի դարս մարդկութիւնն բռնադատեալ ՚ի յառաջադէմ դիւրութենէ փոփոխակի հաղորդակցութեան բնակչաց հեռաւոր աշխարհաց, պէտք զգացեր է միշտ իւր գաղափարաց բացատրութեան դիւրագոյն և արագագոյն ևս եղանակ մի հնարելու քան զնախընթաց ժամանակին գործածուածն. որով և նախկին

դրութեանց զանազանագիծ և բաղադրեալ ձևերն՝ վերածուած են ամենապարզ և դիւրագիծ ձևերու: Արդարև որ Յոյնն և Հռովմայեցին, Գերմանացին և Հայն՝ իւր հնագիր ձեռագրաց իւրաքանչիւր դարուց տառերը տեսնելով այսօր՝ պիտի չզգայ խորշումն անոնց անկանոն և խոշորագիծ ձևերէն, և որոց ընթերցումն իրեն համար յատուկ ուսման մի առիթ պիտի լինի: Այո՛, առաւել կամ նուազ քաղաքակրթեալ ազգի մը դրութեան տառերն՝ առաւել կամ նուազ աստիճան գեղեցկութեան կ'ընծայեն մարդկային ճաշակի, և թերևս դրութեան ոճոյ վայելչութիւնն՝ զոյգ ընդ դիւրասահութեան՝ կարենայ մասամբ մի յայտարար նշան համարուիլ ազգի մը ուսումնական զարգացման աստիճանին. վասն զի գործի մը որչափ աւելի գործածուի, այնքան ևս՝ առաւել յղկեալ, փայլուն, կատարելագործեալ և 'ի զարգացման կը պահուի:

Բայց միթէ այս անընդհատ յառաջադիմութիւնն 'ի մասին դրութեան՝ մեր օրերս հասած է իւր բարձրագոյն աստիճանի կատարելութեան, միթէ ստացած է լիուլի այն արագութիւնն՝ զոր կը պահանջեն ժամանակիս պարագայք, միթէ մինչ 'ի զենիթ վերացեր և դադա՛ր առած է առաւել ևս բարձրանալէ և կատարելագործուելէ. — յայտ է թէ ոչ ոք առանց տրամաբանական և փորձառական գիտութեան դէմ անիրաւելու՝ կարող է հաստատական պատասխան տալ: Եթէ կարելի լինի մարդուս իւր դրութեան եղանակը հաւասարել այն արագութեան՝ որով միտքն 'ի վայրկենի կը յղանայ բիւրաւոր գաղափարներ, այն ատեն միայն լիուլի գոհ լինելով պիտի դադարէր մարդս 'ի փափաքանաց յառաջադիմութեան. բայց քանի որ այս գաղափարական նպատակէն դեռ շատ հեռի կը նկատէ իւր արուեստը, պիտի ձգտի միշտ առ այն, պիտի անձկայ միշտ և հետամուտ լինի հնարելու եղանակ մի՝ որով եթէ կարող չլինի դրոշմել 'ի թղթի՝ մտաց փախըստական արագասլաց գաղափարները, սակայն կարենայ գէթ զայնս բացատրող բնածիր գործարանին, այսինքն՝ լեզուի կամ խօսելու ձրից արագութեանն հասնիլ:

Եւ յիրաւի, միթէ մեզմէ իւրաքանչիւրին հանդիպած չէ՞ շատ և շատ անգամ, որ մինչդեռ գրիչն նիւթապէս կը ջանայ դրոշմել 'ի թղթի՝ մտաց գաղափար մի, ուրիշ մը վրայ հասնելով միտքն նոր եկաւորին հետ զբաղած, անկատար թողու առաջնոյն բացատրութիւնը. որոց բազմաթիւք ևս ևսէ ևս իբրև չղթայի մ'օղակներ յաջորդելով, կամ այն է՝ որ կը յուսահատցընեն զգրողն ամփոփելու և կապակցելու զայնս իրարու հետ, և կամ որ շատ աւելի ստէպ կը հանդիպի՝ միոյն հետ զբաղելով միւսներն կ'անհետանան և կամ իրենց սկզբնական փայլը կը կորսնցընեն 'ի բացատրութեան: — Դարձեալ, միթէ մեզմէ իւրաքանչիւրին հանդիպած չէ՞ շատ և շատ անգամ, որ եկեղեցեաց մէջ քաջախօս քարոզչի մը, ատենից մէջ կրակոտ փաստաբանի մը, ժողովոց մէջ եռանդուն ճարտասանի մը, ճեմարանական կաճառաց մէջ իմաստուն բանախօսի մը հանճարէն բորբոքուած և մեր մտաց աշխուժով աւելի ևս վառուած՝ փափաքինք այն իմաստներն անբաժան հետերնիս կրել, և սակայն ձեռքերնիս անկարող տեսնենք այնպիսի արագութեան մը հասնելով փափաքածնիս լրացընելու: — Դարձեալ, միթէ մեզմէ իւրաքանչիւրին հանդիպած չէ՞ շատ և շատ անգամ, որ գիրք

մի կարգացած ժամանակնիս՝ փափաքած լինինք առանց երկար ժամանակ կորսնցընելու՝ գաղափարել անկից զանազան գեղեցիկ և կարևոր հատուածներ 'ի թղթի, և սակայն ժամանակին սղութենէն յաճախ անկատար կը թողունք կամքերնիս: — Ո՞ր դպրոցականն չի բաղձար ամէն վայրկեան՝ փոխանակ զանազան գրոց անվերջանալի էջերուն մէջ ընդերկար և գուցէ նաև անօգուտ տեղ թարթափելու, քաջ վարժապետի մը խօսած դասերն ամփոփելու դիւրութեամբ, որք ամբարանոց մ'են բազմաթիւ գրոց աւանդածին, և շատ անգամ նաև սեփական յատուկ գիտութեան և փորձոյ արդիւնք: Բայց շատ երկայն պիտի լինէր խօսքերնիս եթէ կամէինք մէջ բերել առ մի առ մի այն ամենայն օգուտներն ու ծառայութիւնները՝ զորս սղագրութիւնն միայն կարող է կատարել՝ մարդկային տնտեսական, քաղաքական և մտաւորական կենաց բազմազգի կարօտութիւնները լեցընելով 'ի գրութեան մասին. կարօտութիւնք՝ որք կը մղեն զմարդ անխոնջ ընթացիւք յառաջադիմելու իւր կոչման մէջ, որ է զարգացումն գիտութեանց և արուեստից:

Այո՛, այս ամէն կարօտութեանց՝ սղագրութեան արուեստն օր ըստ օրէ կատարելագործուելով ջանացեր և յաջողեր է դարման մատուցանել: Բայց ի՞նչ է արդեօք այս արուեստ, ի՞նչ նպատակ ունի, ե՞րբ ծագումն առած է և մարդկային պատմութեան մէջ ինչպիսի՞ մասն ունեցեր է մինչև մեր օրերը. ահաւասիկ չորս հարցեր, որոց համառօտիւ պատասխան տալով կը փափաքինք գոհացընել զընթերցողս, որով միանգամայն անուղղակի կերպով մեր աշխատանաց կարևորութիւնը ցուցանել:

Սղագրութեան արուեստն ուրիշ բան չէ՝ բայց եթէ կանոնաւոր գրութիւն մի՝ ըստ կարելւոյն համառօտ ժամանակի մէջ և փոքրագոյն ենթակայի վրայ գրելու: Այս տուած սահմանէս կ'իմացուի յայտնի սղագրութեան նպատակն, որ է նիւթական և մտաւորական օգտութիւն մարդուս: Ժամանակն է դրամագլուխ, կ'ըսենք սովորաբար, և սակայն ո՜րչափ քիչ են այս պատրաստական դրամագլուխը շահեցընողներն. գրագիտի մը համար՝ սղագրութիւնն կը պարգևէ իրեն իւր կենաց եռապատիկ ժամանակը, թող այն ուղղակի դրամական շահերն՝ զորս կրնայ սղագիրն ձեռք բերել քաղաքական և գիտնական առենից մէջ: Բայց այս վերջին շահն ոչ է ուղղակի նպատակ սղագրութեան, ինչպէս բազմագոյնք թերևս սխալմամբ մտքերնին դրած լինին. այլ սղագրութեան ազնուագոյն և միակ պաշտօնն է օգնել զարգացման գիտութեանց՝ դիւրացընելով գրութեանց և հաղորդակցութեանց միջոցները, և եթէ հնար է՝ օր մը զանազան ազգաց սովորական այբուբենից տեղ փոխանակել, իբրև հանրազգային կանոնաւոր գրութիւն մի:

Սղագրութեան արուեստին ծագումն, ինչպէս յառաջ նկատել ուզեցինք, ուսումնասէր մարդկութեան հետ սկսած է, անոր հետ յառաջադիմած, և իւր զարգացումն ստացեր է իմաստնոց ձեռքով, որով յայտնի կ'երևի՝ որ ոչ թէ դրամական շահու ճիգն եղած է ստեղծուելուն պատճառ, այլ ժամանակին մտաւորական կարօտութեանց պահանջն և ջանքն: Սղագրութիւնն յատուկ արուեստական կերպարանք զգեցած է Հռովմայեցւոց մէջ Կիկերոնի ժամանակ և յատկապէս վերջնոյս Տիրոն անուն ազատագրին ձեռամբ, որով երբեմն կոչուած է նաև Տիրոնեան արուեստ. բայց Տիրոնի հնարած սղագրու-

թիւնն ըստ կամս սահմանուած նշաններով կը կազմուէր, որոց քանի մը հազարաւոր թիւն՝ անհնարին կը լինէր մարդուս յիշողութեան մէջ ամփոփուելու: Այն արուեստն Յունաց մէջ աւելի կատարելագործուեցաւ քրիստոնէութեան սկիզբները, մանաւանդ երկրորդէն մինչև ցհինգերորդ դարուց մէջ, յորում ժամանակի՝ ինչպէս յայտնի է 'ի պատմութեանց՝ Որոգինեսի, Ոսկեբերանի, Աւգոստինոսի և ուրիշ Ս. Հարց ճառախօսութիւններն 'ի սղագրաց կ'ամփոփուէին 'ի թղթի և ժողովրդեան մէջ կը տարածուէին. բայց նաև այս ամենայն ամփոփմունք՝ ազատ կամօք սահմանուած նշաններ էին և կամ բառից կրճատութիւնք, ինչպէս կը գտնուին նաև մեր ձեռագրաց մէջ, որք և փակագիր կը կոչուին. օրինակ իմն հետևեալ սովորական եղածներն *.

և (և այլն), զ̃օ (զոր օրինակ), ա̃յ (այսինքն), ը̃ս (ըստ), ը̃դ (ընդ),
ա̃շ (աշխարհ), 9 (որպէս), և

Սղագրութեան զարգացման արգելք եղան մեծապէս բարբարոս ազգաց անընդհատ և ապականիչ արշաւանքներն յԵւրոպա և 'ի քաղաքակրթեալն Արևմտեան Ասիա, եղծանելով զգիտութիւնս և զդպրութիւն, և բռնութեանց ու հարստահարութեանց կեղեքիչ լծոյն տակ նուաճելով ամենէն աւելի ազատասէր ոգիները: Գիտութեանց անկումին՝ իրեն հետ գահավիժեց նաև գրութեան արուեստը, մինչև ցգիւտ տպագրութեան: Զարմանալի երևոյթ մ'է գրականական պատմութեան մէջ, որ մինչդեռ տպագրութիւնն գրութեան ասպարէզը ամփոփելով կարծես արգելք պիտի լինէր սղագրութեան զարգացման, սակայն ընդհակառակն՝ պատճառ եղաւ անոր վերանորոգման: Անգլիա սկզբնական շարժիչ գտնուեցաւ այս զարգացման, և դոդցես խանձարուրք եղաւ սոյն արուեստին: Թէյլըրի և Իսահակ Բիդմանի ձեռքով հիմն դրուեցաւ այն երկրաչափական սղագրութեան, որով յետոյ քիչ ժամանակի մէջ պիտի տարածուէր ընդ համօրէն Եւրոպա, պիտի վերածուէր բազմաթիւ լեզուաց, և սոյն արուեստը կանոնաւոր դրութեան մի պիտի հպատակեցնէր: Բայց Թէյլըրի դրութիւնն որչափ ալ կանոնաւոր էր, սակայն շատ հեռի էր այն արագութեան աստիճանէն՝ զոր կը պահանջէին ժամանակին պարագաներն **. ուստի հարկ եղաւ դարձեալ նոյն դրութեան մէջ

* Մեր նախնեաց ժամանակէն, բայց 'ի այս փակագիր նշաններէն և այլ քանի մը ըստ կամս 'ի կիր առեալ համառօտագրութիւններէ, չունինք ոչ ինչ յիշատակութիւն սղագրութեան գործածման. սակայն և Ագաթանգեղոսի մէջ յիշեալ (տպագրութիւն Վենետկոյ, էջ 89, 140) նշանագիրներն կ'ենթադրին անշուշտ հասարական կամ յատկական համառօտագրութիւնք:

** Ի մանկութենէ ծանօթ մ'եղած լինելով Գաղղիոյ մէջ ընդհանրացած՝ Տիւփլոյէ - Եզիարդ սղագրական դրութեան (որ կատարելագործեալ վերածումն մ'է Թէյլըրի կամ երկրաչափական դրութեան), նախ քան զառաջինս՝ ժամանակ մը փորձեցինք զայն հայկական լեզուին յարմարելու, զոր և մասամբ իսկ կատարեր էինք, երբ յետոյս վերածման՝ բազմաթիւ դժուարութիւններէ խափանեալ, և Կաբելսպերկերի դրութեան տրամաբանական ոճէն յգացած՝ նախամեծար դասեցինք զայս քան զառաջինն:

մուծանել անթիւ ըստ կամս համառօտութիւններ, որք արգելք եղան անոր զարգանալուն, առանց կարենալու հասնիլ այն կատարելութեան՝ զոր կրցաւ ստանալ գերմանացի Փասւէր Կապելսպէրկէրի դրութիւնն: Վերջնոյս առաւելութիւնքն քան զնախընթաց անգղիական դրութիւնն՝ կը կայանայ զանազան կէտերու մէջ, յորոց գլխաւորներն են հետեւեալներն.

Կապելսպէրկէրի դրութիւնն իւր սղմունքները կը կատարէ՝ համաձայն իւրաքանչիւր ազգաց լեզուին քերականական, բառակազմական և ներքին յօրինման. մինչդեռ Թէյլըրի դրութիւնն ըստ կամս և շատ անգամ նաև անիմանալի սղմունքներ կը գործածէ:

Կապելսպէրկէրի դրութեան ուսումն որչափ որ դժուարին է քան զանգղիականն 'ի սկզբան նորավարժի մը համար, սակայն արդիւնքն ալ համեմատական է. վասն զի կանոնաւոր սղմանց պատճառաւ՝ նոյն դրութեամբ գրուած մի ամէն ատեն և ամէն սղագիրներէ՝ որ նոյն դրութիւնը գործածեն՝ կրնայ առանց ընաւ դժուարութեան ինչ կարդացուիլ, սովորական տպագրի նման. մինչդեռ անգղիական դրութեամբ գրուածի մի ըստ կամս եղած համառօտագրութիւններն՝ քիչ մը ժամանակ վրայ անցնելով՝ շատ անգամ նաև գրողին դժուարութիւն կը պատճառեն կարդալու, թող թէ ուրիշ անձի:

Անգղիական նշանագրաց դրոշմուելու կերպին մէջ մերթ յաջ և մերթ 'ի ձախ կատարուելիք գրչին անընական և սովորական գրութեան անհամաձայն շարժումներն՝ բոլորովին անհետացեալ են Կապելսպէրկէրի դրութեան մէջ, որ ըստ սովորական գրութեան՝ ամփոփեալ է չորս սահմանագծերու մէջ և միշտ ձախէն դէպ յաջակողմն յառաջ կ'ընթանայ, ձեռաց բնական շարժման համեմատ:

Այս գլխաւոր առաւելութիւնքն, թող ուրիշ ոչ նուազ կարեւոր կատարելութիւններ, ինչպէս տառից վայելչութիւն, նշանագրաց դիւրասահութիւն և պարզութիւն, ձայնաւոր տառից խորհրդական գրութիւն, և այլն, պատճառ եղան Կապելսպէրկէրի գիւտին արագ արագ ծաւալմանն ամէն քաղաքականացեալ ազգաց մէջ, ինչպէս 'ի Գաղղիա, յԱնգղիա, յԻտալիա, 'ի Սպանիա, 'ի Ռուսիա, 'ի կրկին Ամերիկայս, 'ի Յունաստան, և այլն:

Վերյիշեալ այս ամէն տէրութեանց մէջ կազմուեցան բազմաթիւ ընկերութիւններ՝ իւրաքանչիւրն իրենց կեդրոնական վարչութիւն մը հաստատելով, և իբրև համազգային կեդրոն ճանաչելով Տրեզտայի մէջ գերմանական կայսերական կաճառն: Անհամար գրքեր և բազմաթիւ օրագիրներ կը հրատարակուին արդ յԵւրոպա և յԱմերիկա սոյն դրութեան նշանագրերով, և սղագրութեան ուսումն անհրաժեշտ հարկ մի դարձած է հիմա 'ի զանազան տէրութիւնս բարձրագոյն վարժարանաց մէջ, և 'ի համալսարանս՝ առանձին ուսուցչական գահու արժանացած՝ իբրև պարտաւոր ուսումն: Ոչ միայն գիտութեանց իւր օգուտները կը մատակարարէ, այլ նաև 'ի զինուորութեան՝ բանակաց և պատերազմիկ նաւուց մէջ զօրաց իբրև անհրաժեշտ ուսումն սահմանուած է, որով կ'ընդունին իրենց հրամաններն, և կը կատարուին փոխադարձ հաղորդակցութիւնք 'ի հեռուստ: Տէրութեանց ծերակուտի և երեսփոխանական ատենից մէջ սահմանուեցան գործիներ՝ սղա-

գրելու համար, յորոց միոյն ստորագրութիւնն և պատկերը ներկայացուցած ենք Բազմավէպ Հանդիսարանի հատորներուն մէջ (Հատոր Խ, էջ 232)· համառօտ ըսենք, այժմ սղագրութիւնն Եւրոպայի մէջ իրեն բազմաթիւ քարոզիչներն ունի, որոց նպատակն է իսպառ ընդհանրացընել զայն ամենայն ազգաց մէջ և սովորական գրութեան պաշտօնը յանձնել սղագրութեան ձեռքը, և ինչպէս արաբական նշանները 'ի թուաբանութեան՝ այսպէս նաև համազգային գրութիւն մի հաստատել սղագրութեամբ՝ փոխանակ բազմազգի այբուբենից իւրաքանչիւր ազգաց:

Իտալիոյ մէջ սղագրութեան այս եռանդուն կուսակիցներէն մին, ազնուախոհ և գիտուն երիտասարդ մի, նաւական զինուորութեան սպայ և ասպետական շքանշանով պատուեալ՝ սղագրութեան վարժապետ, Պ. ՈՍԿԱՐ ԿՐԷՔՈՑ, որ հիմնադիր և գլուխ է Նէապոլսի սղագրական Պարթենոպեան – Կաճառէն, խրախոյս տուաւ մեզ, շնորհելով իւր ձեռնտուութիւնն՝ վերածելու այս Կապելսպերկերի գրութիւնը նաև հայկական լեզուի, յորդորելով նուազագոյն յառաջադէմ չվհատնելու նաև յայսմ մասին զարգացման՝ ազգի մը՝ որոյ գործունէութիւնն և 'ի լուսաւորութիւն դիմելու ջանքն և յարմարութիւնն 'ի մտաւորական ձիրս՝ զինքը քաղաքակրթեալ ազգաց սիրելի և յարգելի ընծայեր է: Մեք իրեն և մեր փափաքանաց համաձայն գործելով՝ կը հրատարակեմք այս մեր վերածմունքն Հայկական – Ստենոգրաֆիան, և զոր 'ի նշան մեր երախտագիտութեան և յարգութեան նուիրելով իրեն, պարտք կը համարինք աստ հրապարակաւ մեր շնորհակալութիւնը մատուցանել սու-նոյն ինքն Հեղինակ իտալական – նաւային – սղագրութեան և խմբագրապետ Ստենոգրաֆիան (La Stenografia) անուամբ լուսամիտ ամսաթերթին, մաղթելով փափաքանօք՝ որ իւր սիրով մշակած այս արուեստն՝ փութով և յաջող զարգացումն գտնէ նաև մեր ազգին և ուրիշ արևելեան ժողովրդոց մէջ:

# ՀԱՅԿԱԿԱՆ

# ՍՂԱԳՐՈՒԹԻՒՆ

## ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԴՐՈՒԹԵԱՆՍ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Սղագրութիւնն է արուեստ մի, որ կ'ուսուցանէ՝ ըստ կարելւոյն համառօտ ժամանակի մէջ և 'ի փոքրագոյն ենթակայի գրել:

Փրանկիսկոս Քսաւեր Կապելսպէրկերի [1] գիւտէն վերջը՝ սղագրութիւնն՝ բանաւոր գրութեան յատկութիւն ստացաւ, ոչ միայն բառից կազմակերպութեան նկատմամբ, այլ և անոնց համառօտագրութեան օրինօք: Այս օրէնքներն ոչ են ըստ կամս սահմանուած, ինչպէս էին երբեմն Տիրոնեան [2] արագագրութեան մէջ կամ յունական նշանագրութեան և կամ Թէյլըրի երկրաչափական համառօտագրութեան մէջ, այլ վերածեալ են կանոնաւոր կատարեալ դրութեան մի:

Այս Կապելսպէրկերեան դրութիւնս երկու գլխաւոր մասանց կը բաժնուի, որք են.

Ա. Տեսական Սղագրութիւն

Բ. Գործնական Սղագրութիւն

Տեսականն կը պարունակէ այն սկզբունքներն և կանոնները, որովք բառերն կը գրուին:

1 Ծնեալ 'ի Միւնիխ Պաւարիոյ, 'ի 1789 փեբրուար 8, մեռեալ անդ 'ի 1849 յանուար 4:

2 Տիրոն՝ Կիկերոնի ազատագրեալն էր և գրագիր, որ հնարեց իւր անուամբ կոչուած Տիրոնեան նշանները, որք մեծաւ մասամբ ըստ կամս որոշեալ ձևեր էին, առանց յատուկ կանոններու:

Գործնականն կ'ուսուցանէ այն կերպերը, որովք պատշաճ են 'ի գործ դրուիլ տեսական մասին աւանդածներն. կամ տարբեր բացատրութեամբ ըսելով, կը ցուցընէ թէ ողագրութիւնն ինչ նպատակաց կրնայ ծառայել։

Տեսականն կը պարունակէ իւր մէջ երեք մասն, որք են.

1. Կազմութիւն բառից,
2. Համառօտութիւն բառից,
3. Ջեղչումն բառից։

Գործնականն կ'ամփոփէ իւր մէջ երկու մասն, որք են.

1. Սղագրութիւն յարաբերական,
2. Սղագրութիւն ատենական։

Տեսականին ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆ կ'ուսուցանէ դրոշմել բառերը ձայնագրապէս, այսինքն՝ ինչպէս որ կը հնչուին. և այս մասին ուսումն բաւական է՝ գաղափարաց պարզ հաղորդակցութեան համար. բայց արագագրութեան բարձրագոյն աստիճանին հասնելու համար՝ անհրաժեշտ կարևոր է նաև երկրորդ մասին ուսումն։

Այս ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻՆ մէջ կ'աւանդուին բառերը համառօտելու կանոններն. և համառօտելու աստիճանին և կերպին համեմատ՝ համառօտութիւնք երեք մասանց կը վերածուին, որք են.

1. Համառօտութիւնք այբուբենական տառից։
2. Համառօտութիւնք մասնիկներու, այսինքն՝ նախադրութեանց, ածանցմանց, վերջահօլով փոփոխմանց և լծորդութեանց։
3. Համառօտութիւնք բառից էական մասանց։

Այս վերջին բաժանումնս երկու մասն ունի, որք են.

1. Տրամաբանական սղմունք,
2. Փակագիրք։

Տեսականին ԵՐՐՈՐԴ ՄԱՍՆ կ'աւանդէ այն կանոնները, որովք իմաստի մը զանազան մասունքներն կը ջեղչուին, և այն պարագաներն՝ որոց մէջ կարելի է այս ջեղչումն կատարուիլ։

Այս ամէն կերպ համառօտութեանց վրայ, ինչպէս նաև գործնականին մասանց վրայօք՝ կարգաւ խօսելով յաջորդ գլուխներուն մէջ, պիտի ջանանք ըստ կարելւոյն պայծառ գաղափար տալ իւրաքանչիւր մասանց այս սղագրական դրութեանս։

# ՏԵՍԱԿԱՆ
# ՍՂԱԳՐՈՒԹԻՒՆ

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

## ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԲԱՌԻՑ

### ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### ԱՅԲՈՒԲԵՆՔ ՍՂԱԳՐՈՒԹԵԱՆ

Սղագրութեան նշաններն կը տարբերին իրարմէ ոչ միայն իրենց ձեւերով, այլ եւ մէկմէկէ ունեցած մեծութեամբ եւ դիրքով. որով ճշդիւ որոշելու համար զանոնք՝ չորս երեւակայեալ գծեր սահմանուած են, որք կը կազմեն Սղագրութեան Տողաշարը։

Առաջին գիծ 1. ........................ Առաջին օժանդակ.
Երկրորդ գիծ 2. ........................ Երկրորդ օժանդակ.
Երրորդ գիծ 3. ———————————— Հիմն կամ Հիմնական գիծ.
Չորրորդ գիծ 4. ........................ Երրորդ օժանդակ.

Այն գիծն՝ որոյ վրայ կը հանգչին նշաններն գրեթէ միշտ, կը կոչուի Հիմնական գիծ եւ կամ պարզապէս Հիմն. իսկ միւսներն, որք նշանաց երկայնութիւնը կ'որոշեն, կ'ըսուին Օժանդակք կամ երկրորդական գծեր։

Առաջին գիծն՝ երկրորդէն, եւ չորրորդն երրորդէն՝ գրեթէ կրկին անգամ աւելի հեռաւորութիւն ունին, քան թէ երկրորդն երրորդէն։

Չորրորդ գիծը հիմնականէն բաժանող միջոցն՝ մեծագոյն է քան զառաջինն երկրորդէն բաժանող միջոցը։

## ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ

*Կապելապէրկերի գրութեան մէջ առաջին կարեւոր և հիմնական սկզբունքն է հետեւեալն.*

Սղագրութիւնն՝ խօսելու ժամանակ հնչուած ձայնը միայն 'ի գրի կ'առնու, առանց ուշ դնելու ուղղագրութեան կանոնաց, որ եւ իցէ լեզուի մէջ։

*Այս իրեն ձայնական գրութեան պատճառաւ՝* Կապելապէրկերի *գրութիւնն կոչուած է նաև* Ձայնագրութիւն։

***

*Համառօտագրութեան այս հիմնական օրէնքը դնելէն վերջը, հարկ կը համարինք նախ քանի մը կարեւոր ծանօթութիւններ աւանդել համառօտիւ՝ հայկական լեզուիս տառերուն վրայօք, որոց ձայնական յատկութեանց վրայ հիմնեալ է այս մեր դրութիւնն, և յետոյ ըստ կարգի խօսիլ սղագրութեանս այբուբենի կազմութեան և նշանագրաց վրայ։*

# Ա

## ԱՅԲՈՒԲԵՆՔ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ

Մեր լեզուին մէջ չորս տեսակ դասաւորութիւն կայ տառից, որք են. Ձայնաւորք, Երկբարբառք, Բազմաբարբառք, Բաղաձայնք։

Բաղաձայնք հինգ խմբի կը վերածուին, և են, Լերկք, Միջինք, Թաւք, Հագագայինք և Նայք, ըստ հետևեալ ցուցակին.

Ա. Ձայնաւորք. — ա, ե, է, ը, ի, յ, ո, ւ, օ (աւ, ով)։
Բ. Երկբարբառք. — աւ, եւ, իւ, ու, եա, այ, ոյ, եօ, ով։
Գ. Բազմաբարբառք. — եաւ, ուա, ուե, ուէ, ուի, ուո։
Դ. Բաղաձայնք. — որք կը դասաւորին հետևեալ կերպով.

1. Լերկք . . . պ – կ – տ – ծ – ճ – զ – ժ – վ։
2. Միջինք . . . բ – գ – դ – ձ – ջ
3. Թաւք . . . փ – ք – թ – ց – չ – ս – շ – ֆ։
4. Հագագայինք . հ, խ, ղ։
5. Նայք . . . . լ, մ, ն, ր, ռ։

Ա. ՁԱՅՆԱՒՈՐՔ. — Հայերենի մէջ ո և օ ձայնաւորաց հնչումն ազգայնոց մեծ մասին բերանը՝ անզանազանելի նոյնութիւն տուած լինելով, օ ձայնին համար սահմանուած նշանն՝ ուղագրութեանս մէջ կը ծառայէ նաև ո ձայնին համար։ Բայց որովհետև ոչ սակաւ գաւառական և մանաւանդ կեդրոնական Հայաստանի հնչմունքներն, (յայտ է՝ որ Արարատեան գաւառին և Բարձր Հայոց հնչմունքն ընդհանրապէս ընտրելագոյն և ճշգագոյն կը համարուի և նախապատիւ քան ուրիշ գաւառաց կամ գաղթականութեանց հնչմունքն), ո գիրը շատ զգալի կերպով կը զանազանեն օ գրին ձայնէն, հնչելով զառաջինն ուո երկբարբառին գրեթէ համաձայն հնչմամբ, ուստի և ուղագրութեանս մէջ (որ միայն արտաբերեալ ձայնին ուշ կը դնէ) ո ձայնաւորն՝ այն գաւառաց համար կը նշանակուի ուո = վոի սեփական ձայնիւ՝ բառերու սկիզբը, իսկ բառերու մէջ օ գրին նշանով կը դրոշմուի։

Նոյն բանը պէտք է հաստատել նաև ե և է ձայնաւորաց հնչման նկատմամբ. վասն զի մինչեւ բազումք գրեթէ զանազանութիւն չեն դներ այս երկու տառերուն հնչման մէջ. ուրիշ բազմաթիւք ալ իրաւամբ՝ զգալի կերպով կը զանազանեն էն լերկ և կարճ ձայնը՝ են ամփոփ և երկարագոյն ձայնէն, (մանաւանդ երբ բառից սկզբնագիր լինի), հնչելով այս վերջինս գրեթէ իէ երկբարբառին ամփոփ հնչմամբ։ Ուստի նաև մենք այս վերջին հնչման համեմատ նշան մը սեփականելով ե ձայնին, կը դասաւորենք զայն երկբարբառներուն մէջ։

Դարձեալ, ուղագրութեանս մէջ ւ ձայնաւորին առանձին նշան չենք սահմանած, որովհետև ոչ երբեք առանձինն կը հնչուի՝ իրեն սեփական ձայնիւ մը. այլ կը գտնուի կամ բառից սկզբնագիր (և այն՝ ամենաքիչ անգամ և այժմ անսովոր եղած) հ հընչման տեղ գրուած, (զոր օրինակ, ւիւսել, ւիւթեղ, և այլն, փոխանակ հիւսել, հիւթեղ), և այն ատեն կը նշանակուի հ տառին համար սահմանուած նշանով. և կամ կը գտնուի ա, ե, ի տառերէն վերջը, և անոնց հետ միանալով՝ կը կազմէ աւ, եւ, իւ (զոր օրինակ, կաւ, արեւ, հովիւ) երկբարբառները, որք կը հնչուին ավ, եվ, իվ, ուստի ւն ձայնն այս պարագայից մէջ վ տառին նշանով կը դրոշմուի։ Այսպէս նաև երբ ւ տառն պատահմամբ (հոլովմանց և ձայնաւորաց լծորդաձայն փոփոխմանց մէջ) առանձինն մնալու լինի, դարձեալ վի ձայն կը հանէ, ուստի և վի նշանով կը դրոշմուի. զոր օրինակ հոգւոյ = հոգվոյ, տուչութիւն = տըւչութիւն = տըվչութիւն, և այլն։ Վերջապէս ւ տառն կրնայ գտնուիլ նաև ո ձայնաւորէն վերջը, և կը հընչուի ու պարզ ձայնով, որոյ համար սեփական նշան մի սահմանուած է։

Ծանօթ է անշուշտ բազմաց նաև յ և հ տառից վրայօք դեռ ևս անլոյծ տեսական խնդիրն՝ անոնց ձայնաւոր և կամ բաղաձայն լինելնուն նկատմամբ. բայց այդ քերականական խնդիրն՝ բնաւ վերաբերութիւն չունի ուղագրութեանս այբուբենին դասաւորութեան հետ. վասն զի մեզի համար ըստ գործնականին խնդիրն լուծուած կը համարուի. ուստի մենք հ տառին առանձին նշան մը սահմանեցինք. որովհետև հագագային գրերու կը վերաբերի. իսկ յ տառն ձայնաւորաց մէջ դասելով՝ իրեն սեփական նշան չսահմանեցինք։ Եւ յիրաւի, յ տառն կը գտնուի կամ բառերու սկիզբը, և այն ատեն փափուկ հի ձայն կը հանէ, որով նաև ուղագրութեան մէջ հ գրին նշանով կը դրոշմուի. և կամ կը գտնուի ա և ո գրերէն վերջը, և այն ատեն անոնց հետ միացած՝ կը կազմէ այ և ոյ երկբարբառներն. և որովհետև վերջին-



1003 / 10868
Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникова
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ներս գրեթէ աի և ոի հնչմունքներն ունին, ուստի նաև նոյն տառից համար սահմանուած նշաններով կը գրուին. իսկ եթէ ոյ իրեն հետևորդ բաղաձայն ունենայ՝ կը փոխուի և կը հնչուի մերձաւոր ուի ձայնին, որով և նոյն ձայներու համար որոշուած նշաններով կը նշանակուի. իսկ երբ յ գիրն բառերու վերջը մնայ՝ չի հնչուիր՝ անձայն ըլլալով, որով և ուղագրութեան մէջ չի գրուիր: Այսպէս ուրեմն յարութիւն = հարութիւն, յոքնակի = հոքնակի, Հայաստան = Հաիաստան, հոյակապ = հոիակապ, բոյն = բուին, գոյն = գուին, մարդոյ = մարդո, մարդոյն = մարդուին, և այլն:

Բ. ԵՐԿԲԱՐԲԱՌՔ. — Երկբարբառներէն աւ և ով իրենց սեփական ձայն չունենալնուն համար՝ նաև ուղագրութեանս մէջ յատուկ նշան չունին. որովհետև աւ կամ կը հնչուի ավ ձայնիւ, զոր օրինակ, հաւաւ, աւաղ, աւետիս, և այլն, և այն ատեն կը դրոշմուի ա և վ տառից նշաններով. և կամ օ կը հնչուի, զոր օրինակ, կարաւղ = կարօղ, բաւաւղ = բաւօղ = բավօղ, և այլն, և այն ատեն կը դրոշմուի օ ձայնին նշանով: — Նոյնպէս նաև ով երկբարբառն՝ միշտ հնչման մէջ հաւասար է օ ձայնին, զոր նախնիք (ինչպէս նաև մենք այսօր) կը գործածէին օտար ազգաց երկար օ գրին տեղ. զոր օրինակ Սափփով = Սափփօ, յովտ = յօտ, Սողովմոն = Սողօմոն, Յակովբ = Յակօբ, և այլն, ուստի նաև կը դրոշմուի օ տառին նշանով: Ով երկբարբառն անուանց գործիական[1] հոլովներու մէջ (Դ. Հոլովումն), կը հնչուի ով և վ յատուկ ձայներով, ուստի և ուղագրութեան մէջ նոյն գրերուն նշաններով կը դրոշմուի:

Դարձեալ, երկբարբառներէն եւ նախնեաց գրութիւնն՝ ըստ այժմեան ռամիկ և առհասարակ եղած հնչմամբ եօ ձայնիւ կը հնչուի, ուստի նաև ուղագրութեանս մէջ եօ ձայնին սեփականեալ նշանով կը դրոշմուի: — Իսկ երբ եւ հնչուի եվ, զոր օրի-

1. Գրաբառի հոլովմանց մէջ սեռականէն միշտ կը ձեւանայ գործիականն. ուր որ սեռականն ու կը վերջանայ, գործիականն կամ սեռականին պէս կը լինի, (զոր օրինակ, ղորդ, ղորդու, ղորդու, և այլն), և կամ կը կազմուի՝ սեռականին վրայ ն գիրն աւելցընելով, որ գործիականակերտ բին քով գալով՝ մի կը փոխուի. (բաղաձայն տառիւ վերջացած սեռականներուն քով բ գիրն կ՚աւելցուի միշտ գործիական կազմելու համար). զոր օրինակ, ծոտր, ծոտու, ծոտու(ն)բ = ծոտումբ, և այլն: Չորրորդ հոլովման ով վերջաւորեալ գործիականներուն վ գիրը՝ միւս հոլովմանց մէջ եղած ու, ւ, և այլն, վերջաւորութեան տեղ գրուած է. վասն զի եթէ չորրորդ հոլովման մէջ ալ ո նշանագրին քով ւ գրուելու լինէր՝ պիտի շփոթուէր հինգերորդ հոլովման ու վերջաւորութեան ձայնին հետ:

նակ, արեւ, ձեւ, նոյն ժամանակ եւ և վ՝ նշաններով կը դրոշ֊մուի, ինչպէս վերն ըսուեցաւ։

Գ. ԲԱԶՄԱԲԱՐԲԱՌՔ. — Ուղագրութեանս մէջ բազմաբարբառք կամ կրկնակ երկբարբառք ըսուածներն տեղի չունին. վասն զի իրենց հնչմունքն բաղադրեալ ձայներէ կազմուելով իւրաքան֊չիւր ձայն՝ իւր նշանագրով կը դրոշմուի. զոր օրինակ.

| | | |
|---|---|---|
| եաւ = եավ | *օրինակ* | բարեաւ = բարեավ. |
| եաւ = եօ | » | բարեաւք = բարեօք. |
| ուա = վա | » | Աստուած = Աստված. |
| ուե = վե | » | պատուեցան = պատվեցան. |
| ուէ = վէ | » | պատուէին = պատվէին. |
| ուի = վի | » | պատուիրեաց = պատվիրեաց. |
| ուո = վո | » | վարձուոր = վարձվոր։ |

Իսկ երբ հարկ լինի առանձինն հնչել այս բազմաբարբառները, զոր օրինակ՝ բայից անկատար ժամանակներուն մէջ առնուին, երդնուին, և այլն, այն ատեն բազմաբարբառ չեն կազմեր, այլ կը գրուին բաժանեալ ու և ե, ու և ի, ու և ո, և այլն, ձայ֊ներով։

Դ. ԲԱՂԱՁԱՅՆՔ. — Ինչպէս քիչ մը վերը (էջ 16) դրուած տառից ցուցակին մէջ կը տեսնուի նշանակուած, բաղաձայն գրերէն ոմանք լերկ են, այսինքն՝ բարակ և ուղղ. ոմանք Թաւ են, այսինքն՝ հաստ և երկար. ոմանք այս երկուքին միջինն են, այս֊ինքն՝ լերկերէն աւելի հաստ և երկար, և Թաւերէն աւելի բարակ և ուղղ են։

Ուղագրութեանս մէջ այս երեք դասաւորութեանց իւրաքանչիւր տառերն իրենց սեփական նշանն ունին, որովք ըստ կանոնի կը դրոշմուին, ինչպէս քիչ յետոյ պիտի տեսնենք։ Բայց ընդհան֊րապէս, մանաւանդ ուր որ իմաստից երկդիմութեան վախ չկայ, կրնան միջին գրոց համար սահմանուած նշաններն՝ նաև Թաւ գրերուն նշանաց տեղ գործածուիլ. վասն զի այժմ (ըստ հասարակ եղած ազգային աղաւաղ հնչման, կամ ճշգագոյն ևս ըսելով ըստ մեծի մասին[2] ազգայնոց հնչման), միջին և Թաւ գրերն

2. Ըստ մեծի մասին կ'ըսենք, վասն զի բոլորովին ընդհակառակն է Ռուսահայոց կամ լաւ ևս՝ Երևանու գաւառականին հնչումն. որոնք [illegible] աւելի երկարամբ փոխանակ միջին և Թաւ գրերուն, գրեթէ նոյնաձայն կը հնչեն միջին և լերկ գրերը, որք լծորդք են իրարու նաև ըստ նախնեաց գրութեան, և համեմատ՝

*խօսակցութեան մէջ գրերէ նոյն հնչմամբ կ'արտաբերուին, առանց մեծ զանազանութիւն մը զգալի ընել տալու. զոր օրինակ.*

բազում և փազում, բնակարան և փնակարան,
  բոլոր և փոլոր,
գանգատիմ և քանքատիմ, գնել և քնել, գուրպայ և քուրպայ,
դարձրնել և Թարցընել, դնել և Թնել, դեւ և Թեւ, ձիւն և ցիւն,
ծրի և ցրի, ծող և ցող, ջուր և չուր, ջնջել և չնչել,
  ջանք և չանք, և այլն:

Հագագային *գրերուն մէջ, որ են* հ, խ, ղ, *ըստ աստիճանի փափկութեան՝* խ *միջին է ընդ* հ *և ընդ* ղ, *որով և շատ անգամ լծորդ ընդ* հ *ոչ միայն ռամկին հնչման մէջ*[1], *այլ նաև ըստ նախնեաց գրութեան, ուստի և հնչման. ինչպէս հետևեալ բառից մէջ* նահապետ և նախապետ, ախուվախ և ահուվահ, հաղբք և խաղբք, խոյ և հոյ, ա՛հ և ա՛խ, հոր և խոր, Թոհուբոհ և Թոխուբոխ, ճախճախուտ և ճահիճ, Ռախաբ և Ռահաբ, *և այլն. բայց որովհետև* խ՝ *ըստ արդեայց հնչման*

*կանոնի հնչման ամէն հնդեւրոպեան ճիւղին լեզուաց: Ուստի իրենց համար ըստ աղագրութեանս՝ հայկական տառերն պիտի բաժնուին հետևեալ կերպով.*

Սուղք. — պ. կ, տ, ծ, ճ, զ, ժ, —:
Երկարք. — փ, ք, թ, ց, չ, ս, շ, վ:

Որովհետև բ, գ, դ, ձ, ջ տառից նշաններն պիտի սեփականուին փ, ք, թ, ց, չ տառից միայն. մինչդեռ պ, կ, տ, ծ, ճ տառից համար միայն որոշուած նշաններն՝ պիտի ծառայեն նաև բ, գ, դ, ձ, ջ տառերու հնչման համար:

Վերը հնչման նկատմամբ միայն՝ Ներքոյ տառանկարիս յերառումբ ըսած ժամանակնիս, կը դատապարտենք բացարձակապէս՝ ոչ բազմաթիւ գրոց և օրագրաց մէջ երբեք երբեք տեսնուած նոյնպիսի փոփոխութիւն մը նաև 'ի գրութեան, որ հակառակ է նախնեաց ուղղագրութեան, և զորս իբրև տպագրական սխալմունք կ'ախորժինք համարել. ինչպէս են, օրինակի համար, հետևեալներն. տպրոց փոխանակ դպրոց, դբտրանոց փոխանակ դպրանոց, ճաւր փոխանակ ջուր, ծանծրացնում ես փոխանակ ձանձրացնում ես, գանկնում՝ կանգնում, բագում՝ բակում, և այլն:

1. Յայտնի է ամենուն Փոքուն Ասիոյ գաւառականաց հ և խ տառից փոխադարձ աղաւաղմունքն, ինչպէս նաև Վանայ և Բաղիշոյ ազգայնոց կեդրոնական Հայաստանի՝ նոյնօրինակ հնչումն, որոց համար բանասիրի մը վկայութիւնն (Գար. Վ. Սրուանձտեան, Համով-Հոտով) կը հաւաստէ թէ իրենց գաւառային կոկորդական ձևէն յառաջ կու գայ այդօրինակ հնչումն. բայց և այսու համերձ չի դեդևիր վերոյիշեալ գիտնականն այս ոճով հնչմամբ՝ ուղղագրել նախնեաց նոհապետ գրութիւնն 'ի նոխապետ:

մերձաւորագոյն է ղի, ուստի սղագրութեանս մէջ կրնան մի և նոյն նշանով դրոշմուիլ խ և ղ, թէպէտ և երկուքն ալ իրենց սեփական նշանն ունին, ինչպէս պիտի տեսնենք քիչ վերջը։

Նայ տառերէն իւրաքանչիւրն իրեն յատուկ նշանն ունի սղագրութեանս մէջ։

Ուստի, մինչև ցայժմ աւանդածնէս հետևեանք կ'ելնէ որ սղագրութեանս մէջ սեփական նշան ունեցող

6 Ձայնաւորք կան, որ են ա, է, ը, ի, օ, ու։

6 Երկբարբառք կան, որ են իւ, եա, այ, ոյ, եօ, և։

29 Բաղաձայնք կան, որ են.
- 8 Լերկք. պ, կ, տ, ծ, ճ, զ, ժ, վ։
- 8 Միջինք. բ, գ, դ, ձ, ջ, ս, շ, ֆ։
- 5 Թաւք. փ, ք, թ, ց, չ։
- 3 Հագագայինք. հ, խ, ղ։
- 5 Նայք. լ, մ, ն, ր, ռ։

Ուստի ընդ. ամէնն 41 նշանագիրք կը կազմեն սղագրութեանս այբուբենը։ — Հետևեալ գլխոյն մէջ կ'աւանդենք իւրաքանչիւր տառի՝ յատուկ սղագրական նշանն։

# Բ

## ՆՇԱՆՔ ԱՅԲՈՒԲԵՆԻՑ ՍՂԱԳՐՈՒԹԵԱՆ

*Ձայնագիր այբուբենի նշաններն կը բաժնուին 'ի ձայնաւոր և 'ի բաղաձայն, սովորական գրութեան տառից պէս։*

*Ձայնաւորք ընդհանրապէս բառից սկիզբն և մէջտեղերն աւելի կը գտնուին քան թէ վերջը. կը գտնուին նաև առանձինն։*

*Բաղաձայն գրերն՝ ձայնաւորաց հետ 'ի միասին՝ մէկ նշանով կը գրոշմուին։*

## Ա. ՁԱՅՆԱՒՈՐՔ ՍՂԱԳՐՈՒԹԵԱՆ

*Հայերենի մէջ ձայնաւոր տառից հնչումն վեց հատ պարզ ձայնից կրնայ վերածուիլ. որոց իւրաքանչիւրն իրենց համապատասխանող նշաններն ունին, և են՝* ա, է, ը, ի, օ, ու։



## ԳԻՏԵԼԻՔ

*Ա ձայնաւորն արտասանելու համար՝ մարդու քիմքն արձագանգ տուող կլոր ձև մը կը ջանայ ստանալ, ինչպէս նաև բերանն արուեստական ձև մը կ'առնու։ Դարձեալ,* ա *ձայնաւորն ամէն ձայնէ աւելի պարզ, դիւրին և գեղեցիկ է. ուստի նաև պարզ, դիւրին և գեղեցիկ նշան մը՝ պէտք է ներկայացընէ այս ձայնը. և ահա այս խնդրեալ պայմաններն* երկրաչափական կէտին *վրայ կը տեսնուին. ուստի այս կէտն կը ներկայացընէ զձայնաւորն* ա։ *— Բայց որպէս զի կարելի լինի այս նշանն ուրիշ գրերու հետ միացընել, կէտանշանն՝ իրմէ առաջ և իրմէ վերջը երկու փոքրիկ գծիկներ ունի՝ թելի նման, որ կ'ըսուին* Թելագիծք։ *Այս գծիկ-*

ներն կրկին կը լինին՝ երբ նշանն բառից սկիզբն և կամ մէջերը գտնուի. երբ առանձինն և կամ բառերու վերջը գտնուի՝ վերջըն-թաց թելագիծ չի կրեր. այսպէս




Է ձայնն հնչելու համար՝ շրթունք հորիզոնական դիրքով կ'երկա-նին, և գրեթէ իրարու կը հանդիպին, թողլով միայն երկայն և նուրբ միջոց մը՝ յորմէ ձայնն դուրս կ'ելնէ: Ուստի նաև հորիզո-նական բարակ գիծ մը՝ կը ներկայացընէ է ձայնը:

Ը ձայնին հնչումն նման է է գրին հնչման, բայց անկէ նուազ զգալի և գրեթէ համր ձայն ունի. կը գտնուի ընդհանրապէս բա-ռից մէջտեղերը՝ բաղաձայնէ վերջը, որ և սովորաբար նիւթապէս չի գրուիր, բայց կը հնչուի: Ուստի նաև աւելի կարճ և նուազ զգալի նշան մը քան է ձայնինն՝ կը ներկայացընէ ը տառին գրեթէ համր ձայնը: Այս ը տառը ներկայացընող գծանշանն՝ կը գրուի քիչ մը դէպ 'ի վեր բարձրացած աջ կողմէն, և կը ծառայէ բաղաձայն գրերը իրարու հետ միացընելու:

Ի ձայնն ամէն լեզուի ձայնաւորաց մէջ բարձրագոյն աստիճան ունեցողն է, և է միանգամայն սուր և ազդու, և գրեթէ նրբա-ծայր սլաքի պէս մարդուս լսելիքը կը խայթէ. ուստի նաև բարձր, սուր և նրբածայր նշան մը կը համապատասխանէ ի ձայնին: Այս նշանն դէպ 'ի վեր գծուած ժամանակ՝ շատ բարակ է և գրեթէ թելագծի չափ ծռած է. և կը կոչուի ի վերել. իսկ երբ վերէն դէպ 'ի վար գծուի՝ նուազ բարակութիւն կ'ունենայ և նուազա-գոյն հակումն դէպ յաջակողմն և կը կոչուի ի վայրէջ. այսպէս




Օ ձայնաւորն կլոր հնչումն ունի, և շրթունք զայն հնչելու ատեն կը կլորնան՝ երկու կատարեալ կիսաբոլորակ կազմելով. որոց մին կը ձևանայ վերին շրթունքէն և միւսն ստորինէն. և ստորին շըր-թունքէն ձևացած կիսաբոլորակ ձևն կը ծառայէ օ ձայնը նշանա-կելու:

Ու ձայնն հնչելու համար՝ շրթունք կ'երկայնին, կը նեղնան և ոլորուն ձև մը կ'առնուն. ուստի նաև ծռած և ոլորուած ձև մը պէտք է որ ներկայացընէ շրթանց և ձայնի այս յատկութիւնները։

## Բ. ԵՐԿԲԱՐԲԱՌՔ ՍՂԱԳՐՈՒԹԵԱՆ

Սղագրութեան մէջ երկբարբառ կը կոչուին՝ ոչ միայն երկու ձայնից մի միայն վանկ կազմող հնչումն, այլ նաև երկու ձայնաւորաց քովէ քով առանձնաբար հնչուիլն։

Երկբարբառք կը գրուին՝ միացընելով երկրորդ ձայնաւոր տառին նշանն առաջին տառին հետ անմիջապէս այն տեղ՝ ուր որ առաջնոյն նշանն լմըննայ։

Սղագրութեան մէջ երկբարբառք երկու խմբի կրնան վերածուիլ, որ են.

1. Յատուկ երկբարբառք.

2. Անյատուկ երկբարբառք։

Յատուկ կ'ըսուին այն երկբարբառներն՝ որք ձևացած են երկու կամ երեք ձայնաւոր տառից քովէքով գալէն, որոց հնչումն մէկ վանկ միայն կը ձևացնեն։

Անյատուկ են այն ամէն ձայնաւոր տառից զուգութիւնք, որոց հնչումն երկու կամ աւելի վանկ կը ձևացնեն։

Յատուկ են հետևեալ երկբարբառներն. այ, ոյ, եօ, ե = իէ։




այ, ոյ, եօ, ձայներն կը գրուին իրենց այբուբենական նշաններով՝ առանց ընդհատման։

եէ՟ կրկնակ ձայնը կը նշանակուի (մանաւորապէս բառից սկզբնագիր եղած ատեն), վայրէջ ի ձայնին հետ՝ միացընելով է ձայնը, սկզբնագիծ փոքրիկ թելագծով մը։

Ասոնցմէ զատ կան նաև ուրիշ երկու յատուկ երկբարբառք՝ եա և իւ, որոց վրայ յետոյ յատկապէս պիտի խօսինք։

Անկատուկ երկբարբառներն կը գրուին խրաքանչիւրն համեմատ այն ձայնից նշաններով՝ յորոց կազմուած են. զոր օրինակ հետևեալքն. այէ, այի, այո, իյա, իյէ, էա, էի, էօ, էու, իի, և այլն, ինչպէս կը տեսնուի ռաջիկայ ցուցակիս մէջ:




Ընդհանուր կանոնով ձայնաւորք և երկբարբառք բառից սկիզբն և վերջը՝ իւրաքանչիւրն իրենց յատուկ նշանով կը դրոշմուին. իսկ բառից մէջերը այլակերպօրէն, այսինքն՝ խորհրդաւոր կերպով մը կը նշանակուին, ինչպէս վերջը պիտի տեսնենք:

## Գ· ԲԱՂԱՁԱՅՆՔ ՍՂԱԳՐՈՒԹԵԱՆ

Բաղաձայնք առանց ձայնաւորաց հետ միանալու՝ ձայն չեն կարող հանել. ուստի սղագրութեան մէջ բաղաձայնք համր և ձայնէ զուրկ են:

Բաղաձայնք՝ հնչելու համար 'ի կիր առնուած բնական գործարանաց համեմատ՝ կը բաժնուին վեց խմբի, որք են հետևեալքն.

1. Նայք·
2. Շչողք·
3. Շրթնայինք·
4. Հագագայինք.
5. Ատամնայինք.
6. Քմայինք:

Իսկ իրենց փափկութեան կամ սաստկութեան աստիճանին համեմատ՝ բաղաձայնք կը բաժնուին երեք այլ և այլ կարգերու, որք են հետևեալներն.

1. Լերկք կամ Սուղք·
2. Միջինք կամ Երկարք·
3. Թաւք կամ Կրկնակք:

# ՑՈՒՑԱԿ ՆՇԱՆԱՑ

## ԱՅԲՈՒԲԵՆԻՑ ՍՂԱԳՐՈՒԹԵԱՆ

| ԴԱՍԱԿԱՐԳ ԲԱՂԱՁԱՅՆԻՑ | Լերկք կամ Սուղք | | Միջինք կամ Երկարք | | Թաւք կամ Կրկնակք | |
|---|---|---|---|---|---|---|
| Շրթնայինք | պ | | բ | | փ | |
| | վ | | ֆ | | | |
| Կոկորդայինք | կ | | գ | | ք | |
| | հ | | խ | | ղ | |
| Ատամնայինք | տ | | դ | | թ | |
| | ծ | | ձ | | ց | |
| Քմայինք | ճ | | ջ | | չ | |
| | ժ | | շ | | | |
| Շչողք | զ | | ս | | | |
| Նայք | լ | | մ | | ն | |
| | ր | | ռ | | | |

Բաղաձայն տառից այս ամէն բաժանումներն, խւրաքանչիւրն իրենց յատուկ սղագրական նշաններով՝ ներկայացեալ կը տեսնուին առաջիկայ ցուցակիս մէջ, (էջ 26)։

Սղագրութեան մէջ նշանագրերն կը բաժնուին երեք կարգի՝ իրենց մեծութեան համեմատ, և են՝ Փոքր, Միջակ և Մեծ։




Փոքր են այն ամէն նշանագրերն՝ որք սղագրութեան տողաշարին մէջ կը բռնեն կէս միջոցն՝ ընդ մէջ հիման և երկրորդ օժանդակ գծին։

Միջակ են այն նշանագրերն, որ ամբողջ միջոցը կը բռնեն՝ ընդ մէջ հիման և երկրորդ օժանդակ գծին։

Մեծ են այն նշանագրերն՝ որք հիմէն սկսելով կ'անցնին երկրորդ օժանդակ գծին սահմանէն անդին, և կամ երկրորդ օժանդակ գծէն սկսելով կ'անցնին հիմնական գծէն անդին. և այս նշանագրերէն ոմանք՝ գրեթէ վերջնասահման գծերուն կը հասնին։

Այս երեք կարգ նշանագրերու բաժանումը կը ներկայացընէ վերոյեդեալ ցուցակն։

# ԳԻՏԵԼԻՔ

## ՆԱՑ ԲԱՂԱՁԱՅՆՔ

Նայ կը կոչուին այն բաղաձայններն՝ որք խօսելու ժամանակ՝ ամենասահուն երագութիւն ունին, և դիւրաւ ուրիշ գրերու հետ կը միանան։

Մ տառն հայերէն շատ բառերու մէջ, ինչպէս նաև ուրիշ հնդեւրոպական քոյր լեզուաց մէջ, նախընթաց կը գտնուի բ, պ, փ շրթնականաց. զոր օրինակ. ամբոխ, ամպոտ, ամփոփ, և այլն։

Ն տառն ընդհակառակն նախընթաց կը գտնուի՝ ինչպէս ուրիշ յաբեթական քոյր լեզուաց՝ այսպէս նաև հայերէնի մէջ՝ ատամնական տ, դ, թ տառից. զոր օրինակ. ժանտ, սանդ, շանթ։

Լ տառն հնչելու համար՝ լեզուն կը կորանայ և ծայրն գալարուելով՝ քմաց կը դպչի. այս շարժումս ներկայացուած է սեփական նշանով մը։ — Այս նշանս երբ բառերու սկիզբն գրուի՝ միայն հետևորդ թելագիծ ունի. երբ բառերու մէջտեղը գտնուի՝ թէ հետևորդ և թէ նախընթաց թելագիծ ունի. իսկ երբ բառերու վերջը գտնուի՝ միայն նախընթաց թելագիծ ունի։

Մ ձայնն հնչելու համար՝ երկու շնչառութիւն պէտք է կատարենք. առաջնոյն մէջ շունչը ներս քաշելով, երկրորդին մէջ դուրս շնչելով. ընդ մէջ այս կրկին շնչառութեանց՝ շրթունք կը միանան. ուստի նաև գիծ մը՝ նախընթաց և հետևորդ թելագիծներով՝ կը համապատասխանէ շրթնային այս շարժման։

Ն ձայնն հնչելու համար՝ լեզուն ալեձև կը շարժի. ուստի և ալեձև գիծ մը կը ներկայացընէ Ն ձայնը։

Ր ձայնն թրթռուն է, և միւս ամէն բաղաձայններուն հակառակ՝ հնչուած ժամանակ շունչը ներս կը քաշէ. ուստի նաև միւս բաղաձայններուն նշանաց դրից հակառակ նշան մը՝ այսինքն՝ դէպ 'ի ձախ ծռած գծիկ մը՝ կը ներկայացընէ ր ձայնը։

Ու ձայնն՝ ը ին գրեթէ կրկինն [1] լինելով՝ նոյն նշանն կրկին մեծցուած՝ կը ծառայէ ու տառին գրութեան համար։

[1] Ու տառն յառաջ եկած կ'երևի հնագոյն ըհ կամ հը բաղադրութենէ. բայց քանի մը բառից մէջ նաև կրկին ըւ երևոյթ և զօրութիւն ցուցած է. զոր օրինակ, փըշըւ և փուշ նոյնանիշներուն մէջ, եւ արմատոյն և եըըոըփ անկէ ածանցեալին մէջ, ինչպէս թերևս նաև եըը արմատոյն և վըտըւն ածանցեալին մէջ, և այլն. ուստի նաև բանաւոր է սղագրութեանս նշանաց մեծութեան մէջ՝ ձայնի նոյն համեմատութիւնը պահել։

## ՇՉՈՂ ԲԱՂԱՁԱՅՆՔ

Շչող կ'ըսուին այն բաղաձայններն՝ որք հնչուելու ժամանակնին սուլելու ձայն կը հանեն։

Զ տառն շարունակեալ և անընդհատ ձայն մ'ունի. ուստի նաև շարունակեալ նշան մը (բոլորակն՝ երկու թելագծերով) կը ներկայացընէ զայն։ — Այս նշանս կը գրուի ընդհանրապէս ձախէն դէպ յաջ, և կը կոչուի ուղիղ. բայց կը գրուի նաև յաջէն դէպ 'ի ձախ, և այն ատեն կը կոչուի խոտոր. և կը գործածուի օին նշանին առջև և ուրիշ քանի մը դիպաց մէջ։

Ս ձայնն աւելի զօրաւոր է զ էն. ուստի նոյն նշանն աւելի մեծցուցած (այսինքն՝ բոլորակին կրկին տրամագծիւ), կը ծառայէ ս ձայնին. և զ ին նշանին պէս թէ ուղիղ և թէ խոտոր կը դրոշմուի։

Սղագրութեանս մէջ նայ տառերն և ս պարզ շչողն՝ միանալով իրարու հետ և կամ լերկ, միջին և թաւ բաղաձայնից հետ՝ կը կազմեն յօդական կոչուած բաղաձայնները, որոց վրայ յետոյ պիտի խօսինք։

## ՇՐԹՆԱՅԻՆ ԲԱՂԱՁԱՅՆՔ

Այս կարգիս կը վերաբերին այն ամէն բաղաձայններն՝ որոց հնչումն շրթանց ձեռքով կը կատարուի։

Պ բաղաձայնն կը հնչուի՝ նախ գոցելով շրթունքներն և յետոյ արագութեամբ բանալով, երկու շրթանց մէջ մնացած բացուածքէն հանելով ձայնը, որ և քիչ մը թրթռուն ձայն ունի. ուստի նաև կարճ գիծ մը՝ քիչ մը հակեալ և թելագծով մը վերջացած՝ կը ծառայէ այս ձայնը նշանակելու համար։

Բ ձայնն աւելի երկար և աւելի զօրաւոր է պ ձայնէն, և նոյն կերպով կը հնչուի. ուստի նաև բ ձայնին համար կը ծառայէ այն նշանն՝ որ կը գործածուի պ ձայնին համար. բայց միայն քիչ մ'աւելի երկայնած և զօրացած։ — Այս նշանս կրնայ թէ վերէն դէպ 'ի վար գծուիլ (որով կը կոչուի վայրէջ), և թէ՝ վարէն դէպ 'ի վեր (որով կը կոչուի վերել). բայց այս երկու կերպին մէջ եւ՝ միշտ իր դիրքը հաստատուն կը պահէ. այսինքն՝ կը գծուի՝ սկսելով միշտ հիմնական գծէն քիչ մը վերով՝ մինչև գրեթէ չորրորդ գիծը, կամ չորրորդ գծէն քիչ մը վեր սկսելով՝ մինչև հիմնական գծէն քիչ մը վեր։

Փ ձայնն աւելի զօրաւոր հնչումն ունի և գրեթէ բին կրկինն է. ուստի նաև բին նշանն խաչաձև հատմամբ վերջին թելագծին կը ծառայէ նշանակելու փ ձայնը։

Վ ձայնն հնչելու համար՝ շրթունք կը կորանան քան զպ ձայնն հնչելէն աւելի. ուստի նաև պ գրին նշանն՝ կոր ձև առած՝ կը ծառայէ վ ին ձայնը նշանակելու։

Ֆ ձայնն ևս՝ շրթնային է և կոր, բայց վ ին ձայնէն աւելի երկար և զօրաւոր է. ուստի վ ին նշանն աւելի երկար և աւելի զօրաւոր ձև առած՝ կը ներկայացնէ ֆ ձայնը։

## ՀԱԳԱԳԱՅԻՆ ԲԱՂԱՁԱՅՆՔ

Հագագային կ'ըսուին այն բաղաձայններն՝ որք ճագագով կամ կոկորդով կը հնչուին, ուստի կը կոչուին նաև կոկորդայինք։

Կ ձայնն կը հնչուի մղելով լեզուին կորացեալ մասը՝ քմաց առջևի մասին դէմ. ուստի լեզուին այս կատարած գործը՝ կը ներկայացնէ կորացեալ ծայրով գիծ մը։

Գ ձայնն աւելի զօրաւոր է քան զկ. և լեզուն զայն հնչելու համար՝ կիսաբոլոր ձև առած՝ կը զարնուի քմաց առջևի մասին. ուստի նաև փոքրիկ կիսաբոլոր մը կը ներկայացնէ գ ձայնը։

Ք ձայնն աւելի զօրաւոր է գէն, և գրեթէ կրկին գի զօրութիւն ունի. ուստի և կրկնելով երկու անգամ գ ձայնին նշանը՝ կ'ունենանք ք ձայնը։

Հ ձայնն կարճ և թեթև հագագ մի է, և կը մերձենայ զօրութեամբ յունական թաւ հագագին (ῥ), որ տառից վրայ դրուելով իրենց մէջ 'ի մեզ ընդհանրապէս ճ կը փոխուի 'ի նախնեաց. ուստի նաև նոյն յունական հագագին նշանն հակառակ դարձուած՝ կը ներկայացնէ մեր ճ հնչումն։

Խ ձայնն ճ հագագէն աւելի երկար և աւելի զօրաւոր է. ուստի նոյն նշանն աւելի երկընցուցած և աւելի զօրացուցած՝ կը ծառայէ խ ձայնը դրոշմելու համար։ — Մինչդեռ ճին նշանն երկրորդ և երրորդ գծերուն մէջ եղած միջոցը կը բռնէ, խ ին նշանն՝ երկրորդ գծէն ալ անդին կ'անցնի։

Ղ ձայնն շատ աւելի զօրաւոր է խ ձայնէն, և գրեթէ կրկին անգամ աւելի զօրաւոր հագագ ունի քան զճ. ուստի խին նշանն աւելի մեծցուցած և զօրացուցած՝ կը ծառայէ ղ ձայնին։ — Այս նշանս կը գծուի՝ նախ երկրորդ գծէն վեր ելնելով մինչև առաջին գիծն, և յետոյ վար իջնելով մինչև հիմնական գիծն։

# ԱՏԱՄՆԱՅԻՆ ԲԱՂԱՁԱՅՆՔ

Այս խմբիս կը վերաբերին այն ամէն տառերն՝ որք ատամանց օգնութեամբ կը հնչուին։

Տ ձայնն հանելու համար՝ լեզուն կը զարնուի ատամանց և շուտով ետ կը քաշուի. լեզուին այս գործողութիւնն կը ներկայացուի սեփական նշանով մը։

Դ ձայնն աւելի զօրաւոր է քան զտ. և զայն հնչելու համար՝ լեզուն բռնութեամբ ատամանց կը զարնուի, կը դանդաղի նախ և ապա յանկարծական կերպով ետ կը քաշուի. նաև լեզուին այս շարժումն կը նշանակուի՝ իրեն յատուկ նշանով մը, որ կը համապատասխանէ յունական (𐅁) և կամ լատինական (t) տառին։ — Այս նշանս թէ՛ վերէն վար կը գծուի և թէ՛ վարէն վեր, և կրնայ միշտ իրեն դիրքը տեղափոխել ։

Թ ձայնն շատ աւելի զօրաւոր է քան զդ, և գրեթէ կրկին անգամ աւելի ճագագ ունի. ուստի դ ձայնին նշանն խաչաձև համամամբ՝ կը ներկայացընէ Թ ձայնը։ — Այս նշանն ևս կրնայ վերէն վար և կամ վարէն վեր գծուիլ. երբ վարէն դէպ 'ի վեր ձգուի՝ հատումն կամ հանգոյցն վերի մասին մէջ կը կատարուի, իսկ երբ վերէն դէպ 'ի վայր գծուի՝ հանգոյցն ստորին ծայրը կը ձևանայ. Թին նշանն ևս կրնայ իւր դիրքը փոխել, բայց այն ատեն միայն երբ հանգոյցն վերի մասին մէջ կատարուի. վասն զի երկրորդ ձևն երբեք դիրքը չի կրնար փոփոխել։

Ծ ձայնն բաղադրեալ է դս տառից ձայներէն. ուստի և ծ ձայնը ներկայացընող նշանն կը կազմուի դ և ս տառից նշաններէն։ — Այս նշանն ևս դ տառին նշանին նման կրնայ թէ՛ վայրէջ գծուիլ և թէ վերել (ինչպէս կը տեսնուի ցուցակին մէջ). բայց այս երկրորդ նշանն երբեք բառից սկիզբն չի կրնար գրուիլ։

Ձ ձայնն զօրաւորագոյն է ծէն. ուստի աւելի զօրաւոր և աւելի երկար նշան մը կը համապատասխանէ ձ տառին։ — Նոյնպէս և այս նշանն կրնայ թէ՛ վայրէջ և թէ վերել գրուիլ. առաջին նշանն կը գործածուի բառից սկիզբը և մէջերը, իսկ երկրորդ նշանն միայն բառից վերջաւորութեան մէջ։

Ց ձայնն աւելի զօրաւոր է քան զձայնն ձ, ուստի ձ ձայնին վայրէջ նշանն հանգոյցեալ՝ կը ներկայացընէ ց ձայնը։

## ՔՄԱՅԻՆ ԲԱՂԱՁԱՅՆՔ

Քմային կ՚ըսուին այն տառերն, որոց հնչումն քմաց միջոցով կը կատարուի:

Ճ տառն հնչելու համար՝ լեզուն կ՚ընդլայնի և քմաց զարնուելով շուտով կ՚ամփոփի. լեզուի այս շարժումը կը ներկայացընէ Ճ գրին համար յատկապէս սահմանուած նշանն:

Ջ տառին հնչումն՝ նման է Ճի ձայնին, բայց աւելի զօրաւոր է. և լեզուն քմաց զարնուած ժամանակ կը նեղնայ. ուստի նաև Ճ ձայնին սեփականեալ նշանին նման նշան մը, բայց աւելի նեղցուցած՝ կը ծառայէ ջ ձայնը գրելու:

Չ բաղաձայնն ջ էն աւելի զօրաւոր ձայն ունի. որով նոյն ջին նշանն հանդոյցեալ՝ կը ներկայացընէ չ ձայնը:

Ժ ձայնն բաղադրեալ է գրեթէ ձուլմամբ անզգալի զ ձայնին և ջ ձայնին. որով այս երկու տառից նշանաց իրարու հետ ձուլմամբ կը ներկայացուի ժ ին ձայնն:

Շ ձայնն աւելի զօրաւոր եւ աւելի երկար լինելով քան զժ, կը դրոշմուի նոյն նշանը աւելի երկընցուցած ձևով մը:

Ընդհանուր կանոնով՝ բաղաձայններն ամէնն ալ հիմնական գծին վրայ կը հանգչին, ամէնն ալ թեթև հակումն ունին դէպ յաջակողմն, ՚ի բաց առեալ ը տառին նշանն, և գրեթէ ամէնն ալ թելագծով մը կը վերջանան, որ կը ծառայէ զանոնք իրարու հետ միացընելու:

Սղագրութեան նշաններն կը գրուին իրարու կից, առանց երբեք գրիչը վերցընելու թղթին վրայէն՝ բառ մը չլմնցած. այնպէս որ ուր նախընթաց նշանն կը վերջանայ՝ հոն կը սկսի երկրորդն, այսպէս և երրորդն, չորրորդն, և այլն:

Ամէն վանկ կազմող բաղաձայններն իրարու հետ կը միացուին թելագծով մը:

## ՅՕԴԱԿԱՆ ԲԱՂԱՁԱՅՆՔ

Հայերէնի մէջ յօդական կամ բաղադրեալ բաղաձայն ըսելով՝ կը հասկըցուի երկու կամ աւելի բաղաձայն տառից իրարու հետ կցեալ՝ ձայնաւորի մը հետ վանկ կազմելն. այսպէս են, օրինակի համար՝ հետևեալ վանկերն. որդ, կուրծ, ուղխ, արբ, ազդ, ազգ, կորդ, և այլն:

Մեր լեզուին մէջ սակաւաթիւ են այս տեսակ զուգադրութիւնք բաղաձայնից, և եղածներն ալ ընդհանրապէս[1] բառից վերջին վանկերուն մէջ կրնան գտնուիլ, երբ բաղաձայնից այս յօդական միութեան յաջորդ ձայնաւոր մը չլինի. վասն զի այն ատեն երկու բաղաձայններէն մին՝ նախընթաց վանկին հետ կը միանայ, և միւսն՝ յաջորդ ձայնաւորին հետ վանկ կը կազմէ: Զոր օրինակ. խորհուրդ բառին մէջ երկու զուգադրութիւնք կան բաղաձայնից, որ են րհ և րդ. առաջինն յօդական բաղաձայն չի կազմեր, վասն զի ր տառն կը հնչուի խո վանկին հետ միացած, իսկ հ տառն ուրդ վանկին հետ, իսկ րդ զուգադրութիւնն անբաժան կը մնայ, և մէկ ձայնով ու ձայնաւորին հետ կը հնչուին ր և դ տառերն, ուստի կը կազմեն յօդական բաղաձայն մը: Բայց եթէ առնունք, օրինակ իմն, նոյն բառին սեռական հոլովն՝ խորհրդոյ, խոր — հըր — դոյ, պիտի հընչենք զայն ըստ բաժանման վանկերուն՝ խոր, հըր, դոյ, և ոչ՝ խո-րհ-րդոյ (խո-րըհ-րը-դոյ), որ խժաձայն և անիմանալի է հայ լսելեաց: Ուստի ըստ ամենայնի հետևանք կ'ելնէ՝ որ յօդական բաղաձայն մը հայերէնի մէջ կրնայ լուծուիլ բառակազմութեան օրինօք և կամ հոլովմանց և լծորդութեանց մէջ ձայնաւորաց փոփոխմամբ կամ կորուսմամբ, և լինել պարզ բաղաձայն:

1. Ընդհանրապէս կ'ըսենք, վասն զի կրնան հոլովմանց կամ լծորդութեանց և կամ բառակազմութեան օրինաց փոփոխութեամբք՝ ձայնաւորաց կորուսմամբ նաև բառից միջին վանկերուն մէջ երեք բաղաձայն տառ քովէ քով հանդիպիլ և այն ատեն երբեմն անոնցմէ երկուքն կը կազմեն յօդական բաղաձայն մը: – Երբեմն կ'ըսենք դարձեալ, վասն զի հայերէնի մէջ երբ երեք բաղաձայն քովէքով գան՝ հարկ է որ անոնցմէ գոնեա մին նոյ գիր լինի, և կամ ը ձայնաւորով իբարմէ զատուին 'ի հնչման. օրինակ իմն, [illegible]՝ կը հնչուի – [illegible], [illegible] [illegible], [illegible]՝ [illegible], [illegible]՝ [illegible] և այլն: Արդ, երբ մէկ նոյ տառ միայն գտնուի երկու բաղաձայններուն մէջտեղը, կորսուած ձայնաւորին տեղ միշտ ը ձայնաւորը կը հնչուի. զոր օրինակ, [illegible] ([illegible]), [illegible] ([illegible]). [illegible] ([illegible]), [illegible] ([illegible]), [illegible] ([illegible]), [illegible] ([illegible]), [illegible] ([illegible]), [illegible] ([illegible]), [illegible] ([illegible]), [illegible] ([illegible]), և այլն: Բայց երբ նոյ տառն երեք բաղաձայններուն առաջինն և կամ վերջինն գտնուի՝ ը չի հնչուիր կորսուած ձայնաւորին տեղը, այլ բոլորովին կ'անհետանայ, և երկու քովէ քով եկած բաղաձայն տառերն՝ կը կազմեն յօդական բաղաձայն մը. զոր օրինակ. [illegible] (և ոչ [illegible], թէպէտ և բառն է [illegible]), [illegible] ([illegible], բայց ոչ [illegible]), [illegible] ([illegible]), [illegible] ([illegible]), [illegible] ([illegible]), [illegible] ([illegible]), [illegible] ([illegible]), [illegible] ([illegible]), [illegible] ([illegible]), [illegible] ([illegible]), [illegible] ([illegible]), [illegible] ([illegible]), [illegible] ([illegible]), [illegible] ([illegible]), [illegible] ([illegible]), [illegible] ([illegible]): — Նոյն օրէնքն կը զօրէ նաև երբ երեք բաղաձայններէն երկուքն քովէ քով նոյ տառ լինին. զոր օրինակ, [illegible] ([illegible]), [illegible] ([illegible]), [illegible] ([illegible]), և այլն. և ոչ [illegible], [illegible], [illegible], և այլն:

Ուստի լեզուաց բառակազմութեան այս օրինաց համեմատ՝ Կապելսպէրկէրի դրութիւնն երկու տեսակ բաղաձայն կը զանազանէ ,

1. Հեգական կամ վանկական բաղաձայն·
2. Յօդական կամ բաղադրեալ բաղաձայն։

Երբ բաղաձայն մը վանկ ձեւացընէ՝ միանալով մէկ կամ աւելի ձայնաւորի հետ՝ կ'ըսուի հեգական բաղաձայն։

Իսկ երբ երկու կամ աւելի բաղաձայնք իրարու յաջորդեն՝ առանց մէջերնին ձայնաւոր տառի՝ կը ձեւացընեն յօդական բաղաձայն։

Մինչդեռ հեգական բաղաձայնք իրարու հետ կը միացուին փոքրիկ թելագծով մը, յօդական բաղաձայնք ընդհակառակն կը կազմուին առանց թելագծի՝ մէկ նշան միայն ձեւացընելով։

Յօդական բաղաձայնք երկու կերպով կը կազմուին , այսինքն

1 Ջուլմամբ , որ է այլակերպութիւն մը կամ վերածումն պարզ նշանաց՝ 'ի մի միայն նշան ։

2 Շաղկապմամբ , այսինքն՝ միացընելով զանազան բաղաձայններու նշաններն իրարու հետ՝ առանց թելագծի ։



### ՁՈՒԼՄԱՄԲ ԲԱՂԱԴՐԵԱԼ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼՔՆ

| | | | |
|---|---|---|---|
| մբ = | ամբար | բր = | բրածեծ |
| մպ = | ամպ | գր = | գրատուն |
| նձ = | ընձայ | դր = | դրացի |
| նծ = | խանծիլ | պր = | ապրիլ |
| նց = | յանցանք | վր = | վրայ |
| րզ = | մարզել | տր = | տրական |
| րծ = | կարծիք | ղբ = | աղբիւր |
| րձ = | բարձր | ղց = | աղցան |
| րց = | հարցանել | մպր = | ամպրոպ |
| կն = | ակնարկ | մբր = | շամբրել |

### ՇԱՂԿԱՊՄԱՄԲ ԲԱՂԱԴՐԵԱԼ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼՔՆ

| | | | |
|---|---|---|---|
| նտ = | բանտ | րջ = | կամուրջ |
| նճ = | բանճար | րտ = | մարտ |
| նջ = | ականջ | զգ = | ազգ |
| րբ = | արբենալ | զկ = | զկծել |
| րդ = | կարդալ | զմ = | կազմել |
| րճ = | կարճ | | |

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆ ՁԱՅՆԱՒՈՐԱՑ

Սղագրութեանս մէջ ձայնաւոր տառերն երեք կերպ կը նկատուին, այսինքն Սկզբնական, Միջին և վերջնական, ըստ որում բառից սկիզբը, մէջը և կամ վերջը գտնուին:

Ձայնաւորաց նկատմամբ՝ բաղաձայնք կը զանազանին 'ի նախընթացս և'ի հետեւորդս, ըստ որում ձայնաւորներէն առաջ կամ վերջը գտնուին:

Սկզբնական և վերջնական ձայնաւորք իրենց այբուբենական նշանագրով կը դրոշմուին:

Միջին ձայնաւորներն ընդհանրապէս այլակերպօրէն կը նշանակուին:

Այս այլակերպական եղանակն, որ պատկերագծական կերպ մի է զձայնաւորները ներկայացընելու համար, կը կայանայ գլխաւորաբար բաղաձայնից կամ ձեւին փոփոխութեան մէջ և կամ անոնց իրարու հետ ունեցած փոխադարձ դրից փոփոխութիւն մը տալուն մէջ:

Այլակերպութիւնն սովորաբար ձայնաւորին հետեւորդ բաղաձայնին վրայ կը կատարուի, և զարտուղութեամբ միայն երբեմն նախընթացին վրայ:

### Ա

### ՊԱՐԶ ՁԱՅՆԱՒՈՐՔ

#### Ը, Ե, Է, միջինք

Բաղաձայնից իրարու հետ պարզ միաւորութեամբ կը նշանակուի այլակերպօրէն ը ձայնաւորն: — Այս միաւորութիւնն կը լինի սովորաբար ամենափոքրիկ թելագծով մը՝ երկու բաղաձայնները իրարու հետ միացընելով, գրութեան յառաջատուական և հորիզոնական դիրքով: — Բայց երբ բաղաձայնից նշաններն սրածայր սկըսին կամ վերջանան, բաւական է այն ատեն բաղաձայնից ծայրերուն իրարու հետ միացումն՝ առանց թելագծի:

Ե և Է միջին ձայնաւորներն այլակերպօրէն կը նշանակուին՝ միացընելով բաղաձայնները մէկմէկու հետ՝ աւելի երկայն թելագծով՝ քան ինչ որ ը ձայնին համար գործածեցինք: — Օրինակք.

| | |
|---|---|
| զզուել = զըզվէլ | |
| զմռսել = զըմըռսէլ | |
| զննել = զըննէլ | |
| զեղչել = զէղջէլ | |
| զետեղել = զէտէղէլ | |
| զէնընկեց = զէնընկէծ | |
| զսպել = զըսպէլ | |
| զգեստէն = ըզգէստէն | |
| զգետնել = ըզգէտնէլ | |
| ստել = սըտէլ | |
| սերել = սէրէլ | |
| սեպտեմբեր = սէպտէմբէր | |
| սերտել = սէրտէլ | |
| լծընկեց = լըծընկէծ | |
| լմել = լըմէլ | |
| լրտեսել = լըրտէսէլ | |
| լուեցէք = լըուէձէգ | |
| լմնցընել = լըմընձընէլ | |
| լծել = լըծէլ | |
| մերժել = մէրժէլ | |



մժեխ = մըժէխ

մրմնջել = մըրմընջէլ

ըմբռնել = ըմբըռնէլ

ըմպել = ըմպէլ

ներել = նէրէլ

նժդեհ = նըժդէհ

ննջել = նըննջէլ

ներկել = նէրկէլ

ընկրկել = ընկըրկէլ

ընծեռել = ընծէռէլ

պէսպէս = պէսպէս

պեխեր = պէխէր

պղպեղ = պըղպէղ

պնդել = պընդէլ

բերել = բէրէլ

բերդեր = բէրդէր

բրել = բըրէլ

բզէզ = բըզէզ

բժշկել = բըժըշկէլ

բխել = բըխէլ



բրդեղէն = բըրդէղէն
փետտել= բէտէլ
փշեղէն = բըշէղէն
փշրել = բըշրէլ
փչել= բըջէլ
փետրէն = բէտրէն
վերելք = վէրէլգ
վերցընել= վէրծընէլ
վերջէն = վէրջէն
վերէն = վէրէն
կթել
կճկել
կցել= կծէլ
կշռել
գրկել= գըրկէլ
գզել = գըզէլ
գերել= գէրէլ
քերել= քէրէլ
քերթել= գէրդէլ
քթէն



40

քշեցէք = գըշէծէգ


քննելէն = գըննէլէն

ճերքեցէք = ճէրգէցէգ

ճնձեմ = ճընձէմ

ճնչել = ճընջէլ

ճրդեճեմ = ճըրդէճէմ

ճրկէզ = ճըրկէզ

խղդել = խըղդէլ

խեցեղէն = խէցէղէն

խմել = խըմէլ

տեսնել = տէսնէլ

տետր = տէտըր

տնկել = տընկէլ

տնտեսել = տընտէսէլ

դեգերել = դէգէրէլ

դեղ դնել = դէղ դընէլ

դեղնել = դէղնէլ

դրդել = դըրդէլ

դրսերէն = դըրսէրէն

Թերթերը = դէրդէրը

թէպէտեւ = դէպէտէվ

թքնել = դըգնէլ

թխսել = դըխսէլ

ծնեբեկ = ծընէբէկ

ծեծել = ծէծէլ

ծռեմ = ծըռէմ

ձմեռը = ձըմէռը

ձեռներէց = ձէռնէրէձ

ցերեկ = ցէրէկ

ցրուել = ցըրվէլ

ցկնել = ձըկնէլ

ճենճեր = ճէնճէր

ճեղքել = ճէղգէլ

ճշգրտել = ճըշգըրտէլ

ջնջել = ջընջէլ

ջրեղէն = ջըրէղէն

ջրհեղեղ = ջըրհէղէղ

ժխտել = ժըխտէլ

շերեփ = շէրէբ

շշնջել = շըշընջէլ



## Ո կամ Օ միջին

*Ինչպէս որ ո կամ օ ձայնաւորն հնչելու համար՝ բերանն կլոր ձև մը կ'առնու, այսպէս այս ձայնաւորն կ' այլակերպէ՝ կլորցնելով այն բաղաձայնը՝ որոյ հետ վանկ կը ձևացընէ։*

*Այս կլորացումն երեք կերպով կը կատարուի. այսինքն*

1. Նշանին ստորին մասին վրայ. զոր օրինակ.

լո, մո, նո, րո, ռո,



պո, բո, վո, ֆո, տո, ցո, եո, ջո



2. Նշանին մարմնոյն ամբողջութեան վրայ. զոր օրինակ

գո, հո, խո, դո, ծո, ձո, ժո, շո



3. Նշանին վերին մասին վրայ. զոր օրինակ.

կո, ղո, կրո, դո, թո, ծո, ձո



*Հետևեալ ցուցակներու մէջ կ'ամփոփենք բազմաթիւ օրինակներ ո կամ օ միջին ձայնաւորի կիրառութեան, վերոյիշեալ երեք տեսակ զանազան գիրքերու մէջ։*

գոհել = գօհէլ

գով = գօվ

գովող = գօվօղ

զորեղ = զօրէղ

սովոր = սօվօր

սոպռ = սօպըռ

սողոսկել = սօղօսկէլ

լսե ով = լըսէլօվ

լոկ = լօկ

մոմոտ = մօմօտ

մողէզ = մօղէզ

մորոս = մօրօս

մոգել = մօգէլ

նորոգել = նօրօգէլ

նոթճել = նօղ-ճէլ

նոսր = նօսըր

նոտր = նօտըր

նորեկ = նօրէկ

րոպէ = րօպէ

պորտ = պօրտ



բոլորել = բօլօրէլ
բողոքել = բօղօգէլ
բորբոքել = բօրբօգէլ
բորոտ = բօրօտ
փոփոխել = բօբօխէլ
փողոց = բօղօց
տոչորել = տօջօրէլ
տողել = տօղէլ
տոհմ = տօհմ
ցող = ցօղ
ցորեկ = ցօրէկ
ցորեն = ցօրէն
ցոփ = ցօբ
ճոռոմ = ճօռօմ
ճողոպրել = ճօղօպրէլ
ճոճեմ = ճօճէմ
ջոկ = ջօկ
ջոջ = ջօջ
չոր = ջօր
չորս = ջօրս



կոթող = կօդօղ

գուլ = գօղ

գոռոզ = գօռօզ

գովել = գօվէլ

քոսոտ = գօսօտ

քող = քօղ

հոլով = հօլօվ

խոժոռ = խօժօռ

խորթ = խօրդ

դողդոջուն = դօղդօջօւն

Թոթով = դօդօվ

ծով = ծօվ

ծործոր = ծօրծօր

ծոց = ծօձ

ձորձ = ձօրձ

ձոր = ձօր

ձող = ձօղ

ժողովել = ժօղօվէլ

շոգմոգ = շօգմօգ

շող = շօղ



## Ա. միջին

Ա. ձայնաւորն լինելով ամենէն աւելի հնչուն, գեղեցիկ և զօրաւոր, կ՚այլակերպէ հատըցընելով իրեն հետևորդ բաղաձայնը։

Հետագայ (Թիւ 47, 48, 49) էջերն կը պարունակեն բազմաթիւ գործնական օրինակներ ա ձայնաւորին կիրառութեան, որ հայերէն լեզուի մէջ գրեթէ քառապատիկ առաւելութեամբ յաճախ կը գործածուի քան զայլ ամէն ձայնաւորս. իսկ ՚ի գրութեան, մանաւանդ Նախնեաց բոլորագիր ըսուածին մէջ, (որ հիմակուան տպագրին կը համապատասխանէ), ամենազանգազ կը դրոշմուի. այս պատճառաւ Նախնիք ձեռագիր ընդօրինակութեանց մէջ յատուկ համառօտագրութիւն մի կը գործածէին, այսինքն դրոշմելով այբին երեք գծերէն մին միայն. այս գիւտիս հետևեցան նաև տպագիրք ոմանք. այլ յետոյ դժուար ընթերցանութեան պատճառաւ խափանուեցաւ։

Սակայն երբ ա ձայնաւորէն վերջը յաջորդէ դ բաղաձայնն բառի մը առաջին վանկին մէջ, այն ատեն աին Նախընթաց բաղաձայնն կը հատըցուի, անկարելի լինելով դ տառին նշանին հատութիւն տալ՝ իւր գրուելու ոճոյն պատճառաւ, այսինքն վարէն դէպ ՚ի վեր ձգուելու համար։ — Զոր օրինակ.

փափաքող = բաբագօղ

կաթ = կադ

բադ

խադ



| | |
|---|---|
| զանազան | |
| զարմանալ | |
| սարսափ = սարսաբ | |
| սասանել = սասանէլ | |
| լալական | |
| լարախաղաց = լարախաղած | |
| մարմնակալ | |
| մանաւանդ = մանավանդ | |
| մածանել = մածանէլ | |
| նաւական = նավական | |
| նաւել = նավէլ | |
| նարեկ = նարէկ | |
| պատասխան | |
| պաղատանք = պաղատանգ | |
| պատատել = պատատէլ | |
| բանալ | |
| փաստաբան = բաստաբան | |
| փառասէր | |
| վարանել = վարանէլ | |
| վաւաշոտ = վավաշօտ | |



վարդ

վարսակ

կարաւան = կարավան

կակազել = կակազէլ

կապար

գաղտաբար

քացախ = գածախ

համարել = համարէլ

հազար

հասարակ

հաւատ = հավատ

խարել = խարէլ

խաբեբայ = խաբէբա

ղեկավար = ղէկավար

տապան

տարածել = տարածէլ

տասանորդ = տասանօրդ

դատաւոր = դատավօր

դագաղ

դամբարան



| |
|---|
| Թագազարդ = դագազարդ |
| Թարախ = դարախ |
| Թարգմանել = դարգմանէլ |
| Ծառայ = Ծառա |
| Ծակաչք = Ծակաջգ |
| Ճաղկել = ճաղկէլ |
| ցանկապատ = ճանկապատ |
| ցանցառ = ճանճառ |
| ցաւագար = ճավագար |
| Ճանճ |
| Ճարմանդ |
| Ճանաչել = Ճանաջէլ |
| Ճաճանչել = Ճաճանջէլ |
| չարաբան = ջարաբան |
| չափահաս = ջաբահաս |
| ժամանակ |
| ժանգահար |
| շարուած = շարված |
| շաքար = շագար |
| շարական |



Ուրիշ ամէն դիպուածի մէջ ա ձայնաւորն կը նշանակուի իւր այբբենական նշանով, երբ կարելի չէ այլակերպութիւնն. և կը հանդիպի այս՝ ամէն անգամ՝ նախընթաց դ բաղաձայնին, բաց միջին և վերջնական վանկերու մէջ. զոր օրինակ.

վրադ = վըրադ

դադարք = դադարգ

բռնադատ = բըռնադատ

հակադարձ

Թագադիր = դագադիր

անդադար



Գիտելիք. — Եթէ դիտելու լինինք՝ ամէն ազգաց հնչման մէջ ա ձայնաւորին յատկութիւնն է՝ հնչման տեսակ մի տափակութիւն տալ, կամ լաւ ևս ըսենք՝ վանկերու երագ երագ իրարու յաջորդութեան՝ դանդաղելու սանձ մի ձգել: Աշագրական դրութեանս մէջ ալ բաղաձայնից հաստընալն՝ այս ա տառին ձայնական ի բնէ ունեցած դանդաղանաց պատկեր մ'է:

## Ի միջին

Ի ձայնն՝ ձայնաւորաց մէջ ամենէն աւելի բարձրագոյն աստիճանն ունենալով, իր այլակերպութիւնն կը կատարուի՝ իրմէ վերջի բաղաձայնը երկրորդ գծին վրայ բարձրացընելով, և կամ նախընթաց բաղաձայնին հիմանէն վեր դրոշմելով:

Հետևեալ երկու էջերն կը ներկայացընեն մեզ ոչ սակաւ օրինակներ ի տառին այս տեսակ գրութեան:

զինակիր

զինաւոր = զինավոր

սիգամ

սիգապանծ

սիրել = սիրէլ

սիրամարգ

սիրտ

լինել = լինէլ

լիզանեմ = լիզանէմ

լիրբ

միտել = միտէլ

միգապատ

նիզակ

նիրհեմ = նիրհէմ

պիտանի

պինդ

պիտակ

բիրտ

փիլիսոփայ = բիլիսօբա

փիլոն = բիլօն

52

վիպասան

կիզել= կիզէլ

կիսել= կիսէլ

կիսեփ = կիսէք

գինի

հիմն = հիմըն

հինգշաբթի = հինգշաբդի

խիզախ

տիրածին

տիկին

ծիրանի

ձիր

ցիր

ցիւ

ճիգն

ճիրան

չընչին

ժիր

շինած

շինական



Բառերու սկզբնական վանկերու մէջ ի ձայնն կը դրոշմուի՝ բարձրացնելով նախընթաց բաղաձայնը, երբ այս վերջինս հետեւորդ բաղաձայնէն աւելի փոքրիկ է։ — Զոր օրինակ․

| | |
|---|---|
| զիջանել = զիջանէլ | |
| նիշ | |
| գիշակեր = գիշակէր | |
| գիշատեմ = գիշատէմ | |
| գիշեր = գիշէր | |
| զինչ = զինջ | |
| լիսեռն = լիսէռըն | |
| պիղծ | |



Հետեւեալ վանկերուն մէջ կրնայ նաեւ ի ձայնաւորն իւր վայրէջ նշանով դրոշմուիլ, ձուլելով զայն նախընթաց եւ կամ յաջորդ բաղաձայնին հետ 'ի միասին։ — Զոր օրինակ․

վի, ֆի, բի, տի, դի, ճի, ջի



իդ, իք, իծ, իձ



Այս կերպով դրոշմուած է ի ձայնաւորն հետեւեալ բառից մէջ․

| | |
|---|---|
| բիբ | |
| վիգ | |
| վիթխարի = վիդխարի | |
| քիթ = գիդ | |
| խիթալ = խիդալ | |
| դիտակ | |
| Թիթեռն = դիդէռըն | |
| ծիծաղ | |
| ծիծեռնիկ = ծիծէռնիկ | |
| ձիթալից = ձիդալիձ | |
| ջիղ | |
| չիք = ջիգ | |
| շիթ = շիդ | |



## Ու Միջին

Ու ձայնն ամենէն ստորին աստիճանն ունենալով ձայնից մէջ, կ'պլակերպի՝ ցածցընելով իրեն հետևորդ բաղաձայնը իւր դիրքէն, այսինքն՝ դնելով զայն հիմնական գծէն վար և կամ իւր նախընթաց բաղաձայնին հիմնական տողէն ստորև։

Դնենք օրինակներ հետևեալ երկու էջերուն մէջ՝ ու ձայնին այս կերպ դրոշմուելուն։

| |
|---|
| հում |
| հուպ |
| հունձք = հունձգ |
| խունի |
| խուժդուժ |
| խուլ |
| խուճապ |
| խուռն = խուռըն |
| խուսափեմ = խուսաբէմ |
| տուտն = տուտըն |
| տըտուն |
| տուներուն = տունէրուն |
| տուժումն = տուժումըն |
| մուկն = մուկըն |
| մանուկ |
| նուռն = նուռըն |
| փուտ |
| վուշ |
| կուտել = կուտէլ |
| կուշտ |



դուստր = դուստրը
Թունաւոր = դունավոր
ծուղակ
ձուլարան
ձուկն = ձուկըն
ցուրտ = ձուրտ
չունիմ = ջունիմ
ժուժկալ
շուկայ = շուկա
շուշան
շուրջառ
կուսակրօն
կուպր = կուպըր
գումար
գունաւոր = գունավօր
քուն
քուռակ = գուռակ
քունեմ
հուր
հուժկու



Ընդհակառակն՝ ու ձայնին նախընթաց բաղաձայնն վար կ՚առնըցուի՝ սկզբնական վանկի մէջ, երբ նախընթաց նշանն՝ հետևորդէն աւելի փոքրիկ է։ — Զոր՟օրինակ․

| | |
|---|---|
| գուշակեմ = գուշակէմ |  |
| գուԹ = գուդ | |
| զուգընԹաց = զուգընդած | |
| զուգաբար | |
| սուտ | |
| մուԹ = մուդ | |
| մուծանել = մուծանէլ | |
| ռումբ | |

Իսկ երբ ոչ նախընԹաց և ոչ հետևորդ բաղաձայնն կարելի չէ վար առնուլ, այն ատեն պարզապէս ու ձայնաւորին այբբենական նշանագիրը կը գրուի, որ այս դիպուածիս մէջ կը ձուլուի կամ նախընԹաց և կամ հետևորդ բաղաձայնին հետ, և այս կերպով ծնունդ կու տայ հետևեալ վանկ կազմող բազմաԹիւ զուգադրուԹեանց։ — Զոր օրինակ․

1․ ՆախընԹաց բաղաձայնին հետ ձուլուած վանկեր․

լու, մու, րու, ռու, պու, բու, վու, փու,



2․ Հետևորդ բաղաձայնին հետ ձուլուած վանկեր․

խու, տու, դու, ճու, ջու, դրու, բրու



ուզ, ուս, ում, ուր, ուք, ուկ, ուդ, ուժ, ուշ



Կանխաւ յիշուած (էջ 32) յօդական բաղաձայնից նման՝ կը կազմուին նաև հետևեալ վանկ կազմող զուգադրութիւնք։

լուզ, լում, լուք, լուկ, լուդ, լուժ,



լուշ, մուժ, մուշ, մուր, պուր, բուր, վուր,



խուր, տուր, դուր, ճուր, ջուր



Հանդիպակաց երեսին մէջ զետեղուած օրինակներն կը ցուցընեն ու ձայնին կիրառութիւնն այս տեսակ զուգադրութեանց մէջ։ Այս օրինակներն մեծ դիւրութիւն կու տան նաև ուրիշ նման զուգադրութիւններ կազմելու այնպիսի դիպուածոց մէջ՝ որք գուցէ մեզմէ նախատեսուած չեն այս համառօտ դասատետրիս մէջ։

| | | |
|---|---|---|
| սիրասուն | | |
| լուր | | |
| մուրացիկ = մուրաձիկ | | |
| պուրակ | | |
| բուրմունք = բուրմունգ | | |
| բուրաստան | | |
| բուրուառ = բուրվառ | | |
| բուռն = բուռըն | | |
| տուրեւառ = տուրէվառ | | |
| դուքս = դուգս | | |
| Թուփեր = դուբէր | | |
| Թուքումուր = դուգումուր | | |
| ծուռ | | |
| ծուռումուռ | | |
| ծուծ | | |
| ցուցումն = ձուձումըն | | |
| ցուցակ = ձուձակ | | |
| ջութակ = ջուդակ | | |
| ջուր | | |
| չու = ջու | | |



## Բ

# ԵՐԿԲԱՐԲԱՌՔ ԵՒ ԲԱԶՄԱԲԱՐԲԱՌՔ

---

### ԵՐԿԲԱՐԲԱՌՔ

Ողագրութեան մէջ երկբարբառ կը կոչուի ոչ միայն երկու ձայնաւորաց՝ միացեալ հնչմամբ՝ մի միայն վանկ կազմելն, այլ նաև առանց միջանկեալ բաղաձայնի՝ երկու ձայնաւորաց պարզապէս իրարու յաջորդելն։

Երկբարբառներն ընդհանուր օրինօք՝ կը հետևին պարզ ձայնաւորաց կանոններուն․ ուստի

1․ Բառերու սկիզբն և վերջը՝ իրենց այբբենական նշաններով կը դրոշմուին։
2․ Բառերու մէջը՝ այլակերպօրէն կը նշանակուին․ այսինքն, առաջին ձայնաւորն՝ կ'այլակերպի նախընթաց բաղաձայնին մէջ, իսկ վերջին ձայնաւորն՝ հետևորդ բաղաձայնին մէջ կ'այլակերպի։
3․ Երբ բառերու մէջ երկբարբառ կազմող ձայնաւորներէն մէկն և կամ երկուքն ի միասին չեն կրնար այլակերպիլ ոչ հետևորդ և ոչ նախընթաց բաղաձայնից մէջ, այն ատեն երկբարբառք իրենց այբբենական նշաններով կը գրուին։

Հայերէն լեզուի մէջ գոյութիւն ունեցող[1] երկբարբառներն են հետևեալներն, բաց ի յատկապէս երկբարբառ կոչուածներէն,

---

1․ Հայերէն լեզուի մէջ ընդհանուր կանոն է՝ որ երբ ա և ո գրերէն վերջը ուրիշ ձայնաւոր յաջորդէ, այս ձայնաւորին նախընթաց՝ միշտ յ կամ ւ ձայնը կը դրուի․ որով կ'ըսենք Անցա, Անցայով․ Եա, Եայապես․ Վիէննա, Վիէննայի․ Գաղղիա, Գաղղիայէն, և այլն։ Իսկ ւ տառը նախնիք կը գործածէին տառադարձութեանց մէջ՝ ընդհանրապէս ա և ո տառից մէջտեղը․ զոր օրինակ Փարաոն անունը կը գրեն Փարաւոն, Լաոդիկէ՝ Լաւոդիկէ, Մենելաոս՝ Մենելաւոս, և այլն։ Այս ընդհանուր կանոնիս հետե-

զորս յիշեցինք երկբարբառներուն նշանաց վրայ խօսած ժամանակնիս (էջ 24):

Առաջին խումբ.— էա, էէ, էի, էօ, էու,



Երկրորդ խումբ.— իա, իէ, իի, իո, իու



Ասոնցմէ զատ կան նաև երկու երկբարբառք եա և իւ, որոց վրայօք քիչ յետոյ պիտի խօսինք, և որ յատուկ երկբարբառներու դասին կը վերաբերին:

Հետևեալ քանի մի էջերն կը պարունակեն ոչ սակաւաթիւ օրինակներ երկբարբառից աղագրական կերպին, թէ առաջին և թէ երկրորդ խմբերուն վերաբերեալ, ըստ կարգի ձայնաւորաց:

Այսուհետև գրուելիք օրինակաց մէջ աւելորդ կը համարինք նախընթացներուն նման՝ աղագրական նշանները նախ զատ զատ դրոշմել և այնուհետև իրարու հետ միացընել, որ պարզապէս ուսանողաց դիւրութեան և վարժութեան նպատակաւ ըրած ենք, որք այժմ կը համարինք թէ այլ ևս կարօտութիւն չունենան այդօրինակ կրկնութեան:

---

ւանք՝ աա, աէ, աի, աո, աու, և ոա, ոէ, ոի, ոո, ոու ձայնաւորաց զուգադրութենէն կը ծագին հետևեալ բազմաբարբառք. այա, այէ, այի, այո, այու, և ոյա, ոյէ, ոյի, ոյո, ոյու. զոր օրինակ Նայապես, հայեին, հայիմ, այն, արքայութիւն, հոյակապ, յանգոյէ, յանգոյից, խոյով, հայհոյութիւն, և այլն: Իսկ ուա, ուէ, ուի, ուո, ուու երկբարբառներն, ինչպէս առաջ ծանուցինք, կը հնչուին վա, վէ, վի, վո, վու, ձայներով, ուստի աղագրական երկբարբառներու խմբէն դուրս կ'ելնեն:

էակ

էական

խաբէական

էաւ

էած

հրէաստան

թէական

էանամ

էակից

էապէս

էացուցիչ

թէատրոն

թէական

կէաք

քաղդէարէն

մարգարէէն

հրէէրէն

յէէն

յԱնդրէէ

էի

կէլ

հրէլ

էինաբուն

հոսէին

կրէին

բերէին

էօծ

Ծաղկէոյ

անդէորդ

Գէորգ

երէոց

էութիւն

խաբէութիւն

թէութիւն

չէութիւն

հրէութիւն

հիանամ

ձիաւոր

ծիապան

արփիական

լիացող

հոգիանամ

միանձն

հոգիէն

տիեզերք

ձիերէն

գաղղիերէն

դ-իեցին

վարդ-ենիին

Թզենիին

Սեւաստափոլիի

Նանսիի

Նափոլիի

յղիին

լովին

ձիոց

Թիով

Կիլիկիոյ

Ասիոյ

Իտալիոյ

ամպրոն

միութիւն

լիութիւն

լիուլի

արիութիւն

որդիութիւն



Վերջին հինգ օրինակաց մէջ կը տեսնուի նաեւ իւ երկբարբառին գրութեան յատուկ եղանակն, որոյ վրայ այժմ պիտի խօսինք։

## ԵԱ եւ Իւ երկբարբառք

Երկու երկբարբառ միայն, որ են եա և իւ կը գրուին իրենց սեփական կերպով մը։

**ԵԱ.** — Որովհետեւ այս երկբարբառին հնչումն քիչ մ'աւելի երկար և ցած ատրճան ձայնի ունի՝ քան զձայն ի ձայնաւորին, ուստի կը նշանակուի այն՝ վերել ի յին նշանն աւելի երկայն և աւելի հակեալ դնելով։

Եա երկբարբառն ձուլելով դ, ց, բ, ն, բաղաձայնից հետ՝ հետեւեալ վանկական զուգադրութեանց ծագումն կու տայ.

եադ եաց եան բեա



Այսպէս կը տեսնուին դրոշմուած՝ յաջորդ երեսին քանի մի օրինակաց մէջ։

կեաց
առաքեաց
մարդատեաց
հացեփեաց
բարեաց
նեղութեան
ատեան
մարտեան
զեան
արշալուրեան
ջամբեաց
կանամբեաց



Այսպէս կը գրուին նաև շատ ստէպ գործածուած եան մականուանց վերջաւորութիւնք, զոր օրինակ, Մամիկոնեան, Արշակեան, Ներսիսեան, Պետրոսեան, և այլն։

ԻԽ. — Այս երկբարբառն հնչելու ժամանակ՝ կարծես ի ձայնն ընդ մէջ կը կտրէ ու ձայնը. և այս պատճառաւ խաչանիշ հանգուցով կը դրոշմուի՝ իւրաքանչիւր ձայնաւորի այբուբենական նշաններով. և այս կերպ գրութիւնն տեղի կ'ունենայ բառից կամ սկիզբն և կամ վերջը և կամ երբ առանձինն գրուելու լինի։ Իսկ բառից մէջ՝ այլակերպօրէն կը նշանակուի՝ իրեն սեփական յայտարար նշանովը, որ է հանգուցումն նախընթաց և հետևորդ բաղաձայնից իրարու հետ։ — Զոր օրինակ.

կնիւն

անկիւն

ժրութիւն

վանգիւն

հիւնապի

հիւսն

հիւծեալ

## ԲԱԶՄԱԲԱՐԲԱՌՔ

Երեք կամ աւելի ձայնաւորաց անմիջական իրարու յաջորդելն բազմաբարբառ կը կազմէ, որ կոչի նաև կրկներկբարբառ։

Բազմաբարբառք ձայնական կանոնին կը հպատակին, որով կը դրոշմուին լուծուելով զանազան վանկերու. որք ըստ որում մի և կամ երկու ձայնաւորներէ կազմեալ լինելով կը հետևին ձայնաւորներուն և երկբարբառներուն օրինաց։

Հետևեալներն են աւելի յաճախ գործածուած բազմաբարբառք.

այա, այէ, այի, այո, այու, ոյա, ոյէ, ոյի, ոյո, ոյու

իսկ նուազ գործածուած բազմաբարբառք հետևեալներն են.

եայի կամ իայի, եայո կամ իայո, եայու կամ իայու

եայեա կամ իայա, ոյեա, այիւ, ոյիւ, իէի

Հայաստան

բայանուն

կայսրան

ճայակերպ

ամայացան

պայազատ

տղայամիտ

լումայափոխ

հայէին

Նայեցար

յարքայէն

հայերէն

բայերուն

շայեկան

յՈւննայէ

մայեցին

փայփայելով

սադայէլ

անսային

հայիմ

կայլ

ջերմային

փայտային

մնային

գայլ

ճեշտային

մայիս

այո

նայող

Տայոց

տղայոց

Հայոց

վրայօք

խնայող

որայոյ

տղայօրէն

արքայութիւն

պայուսակ

կայուն

մնայուն

գնայուն

զգայութիւն

հոյակապ

խոյակ

գոյակ

կոյանոց

նոյական

գոյական

հաճոյական

հայհոյանք

հայհոյէ

յանգոյէ

շոյել

նոյեմբեր

խոյերէն

երեկոյէն

սամոյետք

խոյից

ստոյիկեան

մերոյին

քոյին

պլտոյից

Հիւկոյի

Թասսոյի

իմոյին

հայհոյիչ

խոյոց

քոյով

գոյութիւն

քոյում

Նոյորդիք

Երեմիայի

յիշեայով

աւետչեայով

Նայեաց

Եսայեայ

հայհոյեաց

կայիափայէ

մայիւն

դիէի

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

## ԱՊԱԹԱՐՑՔ, ՅԱՏՈՒԿ-ԱՆՈՒԱՆՔ

### ԿԻՏԱԴՐՈՒԹԻՒՆ

*Որովհետեւ ապաթարցով նշանակուած բաղաձայնք՝ իրենց հետեւորդ բառին հետ ի միասին կը հնչուին՝ իբրեւ այն բառին մաս կազմելով, ուստի նաեւ ուղագրութեանս մէջ հետեւորդ բառին հետ մէկտեղ կը գրուին՝ առանց նշանի ապաթարցին, իբրեւ ձայնական մաս համարելով յաջորդ բառին։*

*Յատուկ-անուանց գրութիւնն կը հետեւի ուղագրական նախնական սկզբունքին, այսինքն է, «Գրել՝ ինչպէս որ բառերը կը հընչուին», ուստի հասարակ բառերու համար սահմանուած օրինօք կը դրոշմուին նաեւ յատուկ-անուանք։— Իսկ երբ հարկ լինի գրել օտարազգի յատուկ-անուններ, որք այնպիսի ձայներ պարունակեն իրենց մէջ՝ որ մեր լեզուին մէջ չգտնուին կամ լաւ չըհնչուին՝ այն ատեն օտար անունները իրենց յատուկ լեզուին ուղղագրութեան համեմատ դրոշմելու է։*

*Միջանկեալ եւ գլխաւոր պարբերութիւնները իրարմէ զատելու համար, եւ խօսքի մը զանազան մասունքները մէկմէկէ որոշելու համար, ուղագրութեան մէջ կը գործածուի մի եւ նոյն կիտադրութիւնն՝ ինչ որ սովորական եղած է մեր լեզուին գրութեան մէջ։*

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻՆ

Ս.Խ.Հ. ՀԱՆ[illegible]ՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/ XI--1922
Имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ [illegible]

23.646